ՀՖՖ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Մրցաշրջան 2019-2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 4

ԳԼՈՒԽ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 8

Հոդված 1. Կիրառելիության շրջանակը, նպատակը և խնդիրները 8

Հոդված 2. Մրցումների նպատակը և խնդիրները 8

Հոդված 3. Մրցումների բարեվարքային համակարգը 9

Հոդված 4. ՀՖՖ գործառույթները 10

Հոդված 5. Ակումբների պատասխանատվությունը 10

Հոդված 6. Մրցումների մասնակցության մուտքավճարը 12

Հոդված 7. Մրցումները և Մրցումներին մասնակցությունը 12

Հոդված 8. «Արդար խաղը» և գնահատման կարգը 14

Հոդված 9. Պարգևատրումը 15

ԳԼՈՒԽ 2: ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ 18

Հոդված 10. Մրցումների վայրը 18

Հոդված 11. Մրցումների անցկացման կարգը 19

Հոդված 12. Մրցաշարային աղյուսակում թիմերի դասակարգումը 20

Հոդված 13. Խաղացանկը և անցկացման ժամկետները 21

Հոդված 14. Չկայացած և անավարտ խաղերը 22

Հոդված 15. Թիմերի չներկայանալը խաղին կամ Առաջնություններին մասնակցությունից հրաժարվելը 24

Հոդված 16. Բողոքարկումը 25

ԳԼՈՒԽ 3: ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ 27

Հոդված 17. Սպասարկման իրականացումը 27

Հոդված 18. Սպասարկող անձնակազմի նշանակումը 27

Հոդված 19. Սպասարկող անձնակազմի անդամների գործառույթները 28

Հոդված 20. Մրցավարների, Պատվիրակների և տեսուչների վարձատրությունը 29

ԳԼՈՒԽ 4: ՄԱՐԶԱԴԱՇՏԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ 29

Հոդված 21. Անվտանգության ապահովումը 29

ԳԼՈՒԽ 5: ԴԱՇՏԻ ՏԵՐ ԱԿՈՒՄԲԸ 32

Հոդված 22. Դաշտի տեր ակումբի պարտականությունները 32

ԳԼՈՒԽ 6: ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ 34

Հոդված 23. Նախախաղային խորհրդակցությունը 34

Հոդված 24. Թիմերի ժամանումը մարզադաշտ և եղանակային պայմանները 35

ԳԼՈՒԽ 7: ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ 35

Հոդված 25. Ֆուտբոլիստների մասնակցությունը 35

Հոդված 26. Ֆուտբոլիստների փոխարինումները 38

ԳԼՈՒԽ 8: ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ և ՎԵՐԱՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ 39

Հոդված 27. Ֆուտբոլիստների հայտավորումը և վերահայտավորումը 39

ԳԼՈՒԽ 9: ՄԱՐԶԱՀԱԳՈՒՍՏԸ 43

Հոդված 28. Մարզահագուստի գույները, համարները, ազգանունները և հովանավորները 43

ԳԼՈՒԽ 10: ՄԵԴԻԱ և ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ 44

Հոդված 29. Խաղերի տեսագրումը 44

Հոդված 30. Խաղերի հեռարձակումը 45

Հոդված 31. Մամուլի ասուլիսների կազմակերպումը 45

Հոդված 32. ԶԼՄ-ների հավատարմագրումը և տեղակայումը մարզադաշտում 46

ԳԼՈՒԽ 11: ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 46

Հոդված 33. Պայմանագրի գրանցումը 46

Հոդված 34. Վեճերի քննարկումը 46

Հոդված 35. Ակումբի (թիմի) անվանափոխությունը 47

Հոդված 36. Իրավահաջորդությունը 47

Հոդված 37. Թիմերի մասնակցությունը Եվրագավաթներին 48

Հոդված 38. Այլ հարցեր 48

ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ 2019-2020 ՄՐՑԱՇՐՋԱՆԻ ԳԱՎԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ 50

ՀՖՖ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (2019-2020 ՄՐՑԱՇՐՋԱՆ)		
Խմբագրություն 1	Ուժի մեջ է՝ 01.07.2019թ.-ից	Հաստատված է՝ ՀՖՖ Գործադիր Կոմիտեի կողմից 01.07.2019 թ-ին

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՖՖ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն

ՖԻՖԱ Ֆուտբոլի միջազգային ասոցիացիաների ֆեդերացիա

ՈՒԵՖԱ Ֆուտբոլի եվրոպական ասոցիացիաների միություն

ԲԽ ՀՀ Բարձրագույն խումբ

ԱԽ ՀՀ Առաջին խումբ

ԳԽ Գավաթի խաղարկություն

ՍԳԽ Սուպեր գավաթի խաղարկություն

ԿԿ Կարգապահական կոմիտե

ՀՖՖ Գործադիր կոմիտե ՀՖՖ-ի կոլեգիալ կառավարման մարմին

Ակումբ մարզական առումով ՀՖՖ-ի ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի կանոնակարգերին և սահմանված նորմերին ենթարկվող ֆուտբոլային մարզական ակումբ (թիմ), որը մասնակցում է կամ ցանկանում է մասնակցել ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող ֆուտբոլային մրցաշարերին կամ դրանց տարատեսակներին:

Կանոնակարգ ՀՖՖ Պրոֆեսիոնալ Մրցումների անցկացման կանոնակարգ (2019-2020 մրցաշրջան)

Առաջնություն Տվյալ մրցաշրջանի պրոֆեսիոնալ ֆուտբոլի ակումբների միջև անցկացվող ՀՀ ֆուտբոլի առաջնություն:

Պաշտոնական խաղեր Կազմակերպված ֆուտբոլի շրջանակներում անցկացվող խաղեր՝ ազգային առաջնությունների, գավաթի խաղարկության, միջազգային ակումբային մրցաշարերի հանդիպումներ

Մրցումներ ՀՖՖ հովանու ներքո անցկացվող մրցաշարեր (Հայաստանի Բարձրագույն խմբի առաջնություն, Առաջին խմբի առաջնություն,

Հայաստանի Գավաթի խաղարկություն, մանկապատանեկան ֆուտբոլի առաջնություններ)

Ֆուտբոլային սուբյեկտներ Պրոֆեսիոնալ ֆուտբոլում ներգրավված իրավաբանական և ֆիզիկական անձիք

Պատվիրակ Խաղի կազմակերպման և անցկացման հարցերով պատասխանատու

Տեսուչ Մրցավարի, մրցավարի օգնականների, և չորրորդ պաշտոնյայի գործողությունները գնահատող ՀՖՖ-ի ներկայացուցիչ:

Մրցավար ՀՖՖ-ի կողմից նշանակված հանդիպման մրցավար

Մրցավարի օգնական ՀՖՖ-ի կողմից նշանակված հանդիպման մրցավարների օգնական

Չորրորդ պաշտոնյա ՀՖՖ-ի կողմից նշանակված հանդիպման չորրորդ պաշտոնյա

Հանրապետությունում

մարզված ֆուտբոլիստներ Այն ֆուտբոլիստները, ովքեր 15 տարեկանից մինչ 21 տարեկանը գրանցված են եղել ՀՀ տարածքում գրանցված որևէ ակումբում կամ ակումբներում նվազագույնը 3 խաղաշրջան (տարի):

Ակումբում մարզված

ֆուտբոլիստներ Այն ֆուտբոլիստները, ովքեր 15 տարեկանից մինչ 21 տարեկանը գրանցված են եղել տվյալ ակումբում և նվազագույնը 3 խաղաշրջան (տարի) տվյալ թիմի կազմում մասնակցել են պաշտոնական հանդիպումների:

Ազգային արտոնագիր Ակումբին «ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգի» համաձայն շնորհվող վկայական

Հանդիպման կազմակերպիչ Ակումբ (հյուրընկալող, դաշտի տեր), որն իրականացնում է հանդիպման անցկացման կազմակերպչական և այլ առնչվող աշխատանքները:

Պաշտոնյա ՀՖՖ-ի լիազորված հաստիքային աշխատակից, պատվիրակ, տեսուչ, հանձնակատար, կոմիտեի անդամ, հանձնաժողովների և ՀՖՖ-ի այլ իրավասու մարմինների անդամ

Ակումբի պաշտոնյա Ակումբի հաստիքային աշխատակից, այդ թվում՝ մարզչական, տեխնիկական և ղեկավար անձնակազմ, ով հայտավորված է ՀՖՖ-ի պրոֆեսիոնալ մրցումներին մասնակցելու նպատակով:

Խաղի կանոններ Ֆուտբոլ խաղի գործող կանոններ

Մրցաշրջան Ֆուտբոլային տարի, որը մեկնարկում է յուրաքանչյուր օրացուցային տարվա հուլիսի 1-ին և ավարտվում հաջորդ տարվա հունիսի 30-ին:

Խաղաշրջան Ֆուտբոլային տարվա կտրվածքով առաջին պաշտոնական խաղով մեկնարկող և վերջին պաշտոնական խաղով ավարտվող ժամանակահատված:

Համապատասխանելիության

հավաստագիր «ՀՖՖ ենթակառուցվածքային կանոնակարգի» չափանիշների համաձայն ՀՖՖ-ի կողմից տրվող փաստաթուղթ

Խառը գոտի Հավատարմագրված ԶԼՄ-ների համար նախատեսված տարածք՝ հանդիպման մասնակից ֆուտբոլիստների հետ խաղից հետո շփման նպատակով:

Մարզադաշտի սեփականատեր/

վարձակալ Իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը հանդիսանում է տվյալ հանդիպման (խաղի) անցկացման մարզադաշտի սեփականատերը կամ վարձակալը:

Մարզադաշտ ՀՖՖ-ի կողմից համապատասխանելիության հավաստագիր ստացած մարզական շինություն, որտեղ անցկացվում է ֆուտբոլային հանդիպումը:

Հեռարձակում Ֆուտբոլային հանդիպման՝ մարզադաշտից տեսանկարահանման և եթերի տրամադրման, ինչպես նաև համացանցի միջոցով ուղիղ եթերի հեռարձակման ապահովումը:

Հանդիպման մասնակից Ֆուտբոլիստ, ակումբի պաշտոնյա, հանդիպումը սպասարկող անձնակազմ և հանձնակատար

Արտակարգ իրավիճակներ/

Ֆորս-մաժոր Անհաղթահարելի ուժի ազդեցությամբ պայմանավորված հանգամանքներ՝ երկրաշարժ, հրդեհ, պատերազմական գործողություններ, ազգային և առանձնակի ոլորտային գործադուլներ, պետական կառավարման մարմինների կողմից արգելող գործողություններ, համաճարակ, ջրհեղեղ, փոթորիկ, եղանակային վատ պայմաններ և այլ իրադարձություններ, որոնց գործողությունը հնարավոր չէ կանխարգելել, կանխատեսել և նախազգուշացնել:

Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ

(խաղացող) Պրոֆեսիոնալ կարգավիճակ ունեցող ֆուտբոլիստ, ով հայտավորված է տվյալ առաջնությանը մասնակցության նպատակով:

Խաղի ժամանակահատված Խաղից առաջ, խաղի ժամանակ, ընդմիջմանը և խաղից հետո ընկած ժամանակահատված:

ԳԼՈՒԽ 1: ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Կիրառելիության շրջանակը, նպատակը և խնդիրները

1.01. Սույն կանոնակարգը սահմանում է ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող Մրցումների կազմակերպման և անցկացման սկզբունքները, Ֆուտբոլային սուբյեկտների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և իրավահարաբերությունները:

1.02. Կանոնակարգի դրույթները կարգավորում են պրոֆեսիոնալ ֆուտբոլի Մրցումներին մասնակցող Ակումբների, ինչպես նաև Մրցումների կազմակերպման և անցկացման մեջ ներգրավված բոլոր այլ Ֆուտբոլային սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները:

1.03. Կանոնակարգի խնդիրներն են՝

ա) Մրցումների կազմակերպման, անցկացման, ղեկավարման և հսկողության կարգերի սահմանումը,

բ) Մրցումների մասնակիցների համար լիարժեք պայմանների ստեղծումը և ապահովումը:

գ) Մրցումների համակարգի համապատասխանեցումը ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի հիմնարար փաստաթղթերի պահանջներին:

Հոդված 2. Մրցումների նպատակը և խնդիրները

2.01. Մրցումների նպատակն է՝

ա) ՀՀ տարածքում պրոֆեսինալ ֆուտբոլի հետագա զարգացմանը նպաստելը,

բ) Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների վարպետության մակարդակի բարձրացմանը նպաստելը,

գ) միջազգային մրցաշարերում Ազգային հավաքականների և ակումբային թիմերի հաջող ելույթներին նպաստելը,

դ) «Արդար խաղի» սկզբունքների արմատավորմանը նպաստելը:

2.02. Մրցումների խնդիրներն են՝

ա) Բարձրագույն և Առաջին խմբերի թիմերի դասակարգումը՝ ըստ Առաջնությունների արդյունքների,

բ) Մրցումների արդյունքներով գավաթակրի և նախորդ մրցաշրջանի սուպերգավաթակրի որոշումը,

գ) Մրցաշրջանի մրցանակակիրների որոշումը հետևյալ դասակարգմամբ՝

- Բարձրագույն խմբի առաջնության ռմբարկու,
- Բարձրագույն խմբի առաջնության լավագույն ֆուտբոլիստ,
- Բարձրագույն խմբի առաջնության լավագույն մարզիչ,
- Առաջին խմբի առաջնության ռմբարկու,
- այլ մրցանակակիրներ:

Հոդված 3. Մրցումների բարեվարքային համակարգը

3.01. ՀՖՖ-ն՝ Մրցումների բարեվարքային համակարգը ապահովելու նպատակով կիրառվում է հետևյալ չափանիշը՝

ա) արգելվում է միևնույն իրավաբանական կամ ֆիզիկական անձի կամ նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից ֆինանսավորվող մեկից ավելի ակումբների մասնակցությունը ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող պրոֆեսիոնալ ֆուտբոլի Մրցումների տվյալ առաջնությանը,

բ) արգելվում է որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի ուղղակի կամ անուղղակի միաժամանակյա այս կամ այն կերպ ներգրավվածությունը ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող պրոֆեսիոնալ ֆուտբոլի Մրցումների տվյալ առաջնությանը մասնակից մեկից ավելի ակումբի վարչական և/կամ մարզական ղեկավարմանը,

գ) արգելվում է որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի այս կամ այն կերպ վերահսկողությունը կամ ազդեցությունը ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող պրոֆեսիոնալ ֆուտբոլի Մրցումների տվյալ առաջնությանը մասնակից մեկից ավելի ակումբի նկատմամբ:

3.02. Արգելվում է ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող պրոֆեսիոնալ ֆուտբոլի Մրցումներին մասնակից ակումբների և ֆուտբոլային բոլոր սուբյեկտների կողմից պայմանավորված խաղերի կազմակերպումը, կազմակերպման փորձ կատարելը կամ այդ արարքների մասին չհայտնելը:

Հոդված 4. ՀՖՖ գործառույթները

4.01. ՀՖՖ-ն իրականացնում է Մրցումների ընդհանուր ղեկավարումը, մասնավորապես՝

ա) հաստատում է Մրցումների անցկացման կանոնակարգը և խաղացանկերը,

բ) սահմանում է Մրցումների մասնակցության մուտքավճարները,

գ)գրանցում է Մրցումների մասնակից ֆուտբոլային սուբյեկտների միջև իրավահարաբերությունները կարգավորող փաստաթղթերը (աշխատանքային, ֆուտբոլիստների տեղափոխման պայմանագրերը և այլն),

դ) իրականացնում է թիմերի հայտավորման ընթացակարգը,

ե) հաստատում է Մրցումները սպասարկող մրցավարների, տեսուչների և պատվիրակների կազմը,

զ) կազմակերպում է խաղերը և իրականացնում դրանց նկատմամբ հսկողությունը,

է) կազմակերպում և տնօրինում է խաղերի հեռարձակումը,

թ) ամփոփում է հանդիպումների արդյունքները,

ժ)հաստատում է Առաջնությունների արդյունքները և իրականացնում է մրցանակակիրների պարգևատրումը,

ի) իրականացնում է Մրցումների կազմակերպումից բխող այլ գործառույթներ:

Հոդված 5. Ակումբների պատասխանատվությունը

5.01. Ակումբները պարտավոր են՝

ա)անշեղորեն հետևել սույն և ՀՖՖ-ի այլ կանոնակարգերի դրույթներին և կատարել ՀՖՖ-ի Գործադիր կոմիտեի, ՀՖՖ-ի վարչական անձնակազմի և ՀՖՖ-ի այլ մարմինների կողմից ընդունված և պատշաճ կերպով ծանուցված որոշումները (շրջաբերական կամ էլեկտրոնային նամակների միջոցով),

բ) տարեկան առնվազն երկու անգամ ապահովել ֆուտբոլիստների բժշկական հետազոտությունը,

գ) Բարձրագույն խմբի յուրաքանչյուր հանդիպումից անմիջապես հետո ապահովել իրենց թիմերի գլխավոր մարզիչների պատշաճ մասնակցությունը կազմակերպված հետխաղյա մամուլի ասուլիսին,

դ) վարել ֆուտբոլիստների ստացած դեղին քարտերի հաշվառումը և կիրառել ՀՖՖ-ի Կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի պատժամիջոցները՝ առանց ՀՖՖ-ի Կարգապահական կոմիտեի որոշման:

5.02. Ակումբները պատասխանատու են՝

ա)խաղի արձանագրությունում ֆուտբոլիստների և պաշտոնյաների՝ խաղին մասնակցելու իրավասության համար (արձանագրությունում նշված լինելը համարվում է մասնակցություն խաղին),

բ) խաղի ժամանակահատվածում (թիմերի և պաշտոնյաների՝ մարզադաշտ ժամանման պահից սկսած) և դրանից հետո իրենց ֆուտբոլիստների, վարչական անձնակազմի, ինչպես նաև իրենց երկրպագուների անօրինական, անթույլատրելի և անվայել գործողությունների համար,

գ) մարզադաշտում հանդերձարանների, շինությունների և գույքի պատշաճ վիճակի պահպանման համար,

դ) ՀՖՖ-ին ոչ հավաստի տեղեկություն պաշտոնապես ներկայացնելու համար:

5.03. Ակումբներին արգելվում է՝

ա) միջամտել խաղը սպասարկող անձնակազմի գործողություններին,

բ) ներկայացնել ՀՖՖ-ն կամ օգտագործել ՀՖՖ-ի դրոշը և խորհրդանշանը (լոգո)՝ բացառությամբ առանձին գրավոր համաձայնեցված դեպքերի,

գ)Մրցումների շրջանակներում և հրապարակային գործողություններ կատարելիս օգտագործել Ակումբի անվան կամ խորհրդանշանի (լոգո) տարատեսակ (այդ թվում՝ կոմերցիոն գործընկերոջ անվանում), որը գրանցված չէ Ակումբի անվամբ և ՀՖՖ-ում:

Հոդված 6. Մրցումների մասնակցության մուտքավճարը

6.01. Մրցումների անցկացման ծախսերը մասնակիորեն փոխհատուցելու նպատակով սույն կանոնակարգը սահմանում է մասնակցության մուտքավճարներ:

6.02. Մրցումների մասնակցության մուտքավճարները կազմում են՝

ա) Բարձրագույն խումբ՝ 4 500 000 ՀՀ դրամ (չորս միլիոն հինգ հարյուր հազար ՀՀ դրամ)

բ) Առաջին խումբ՝ 1 500 000 ՀՀ դրամ (մեկ միլիոն հինգ հարյուր հազար ՀՀ դրամ)

գ) Գավաթի խաղարկությանը թիմերը մասնակցում են առանց մուտքավճարի:

6.03. Մուտքավճարների մուծման վերջնաժամկետներն են՝

ա) մուտքավճարի գումարի 20%-ը կատարվում է «Մասնակցության հավաստագրի» ներկայացման օրը,

բ) մուտքավճարի գումարի 80%-ը կատարվում է հայտավորման փաստաթղթերի ներկայացման օրը:

6.04. Սույն հոդվածով սահմանված վճարումները կատարվում են բանկային փոխանցման ձևով:

6.05. Սույն հոդվածով կիրառելի վճարումներն ուշացնելու դեպքում սահմանված է տուգանք՝ ուշացված գումարի 20%-ի չափով:

Հոդված 7. Մրցումները և Մրցումներին մասնակցությունը

7.01. Մրցումներին կարող են մասնակցել այն ակումբները, որոնք ունեն իրավաբանական անձի կարգավիճակ, ընդունում են ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի հիմնարար սկզբունքները, կանոնադրությունն ու կանոնակարգերը, չունեն պարտք ու պահանջ ՀՖՖ-ի նկատմամբ և պարտավորվում են կատարել վերոնշյալ մարմինների, ինչպես նաև սույն կանոնակարգի պահանջները:

7.02. Պրոֆեսիոնալ ֆուտբոլի Մրցումներն ընդգրկում են՝

ա)Բարձրագույն խմբի առաջնությունը,

բ) Առաջին խմբի առաջնությունը,

գ) Գավաթի խաղարկությունը,

դ) Սուպերգավաթի խաղարկությունը:

7.03. Մրցումների մասնակից ակումբները մրցաշրջանի մեկնարկից նվազագույնը 10 օր առաջ (մրցաշրջանի մեկնարկ համարվում է հուլիսի 1-ը) հաստատում են իրենց մասնակցությունը Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնություններին, ինչպես նաև Գավաթի խաղարկությանը՝ ՀՖՖ ներկայացնելով սահմանված կարգի «Մասնակցության հավաստագիրը»:

7.04. Բարձրագույն խմբի առաջնությանը մասնակցելու իրավունք են ստանում ՀՖՖ ակումբների արտոնագրման համակարգի պահանջների համաձայն Ազգային արտոնագիր ստացած և մարզական առումով համապատասխան որակավորում ձեռք բերած ակումբների առաջին թիմերը:

7.05. Բարձրագույն խմբի առաջնությանը մասնակցում է առավելագույնը 10 թիմ: Բարձրագույն խմբի առաջնությունում մրցաշրջանի արդյունքներով մրցաշարային աղյուսակում վերջին տեղը զբաղեցրած թիմը զրկվում է հաջորդ մրցաշրջանի Բարձրագույն խմբի առաջնության մասնակցությունից և կարող է մասնակցել միայն Առաջին խմբի առաջնությանը:

7.06. Առաջին խմբի առաջնությունում մրցաշրջանի արդյունքներով մրցաշարային աղյուսակում առաջին տեղը զբաղեցրած թիմը ներկայացնող մայր ակումբը սույն հոդվածի 4-րդ կետի բավարարման պարագայում իրավունք է ստանում հաջորդ մրցաշրջանում հանդես գալու Բարձրագույն խմբի առաջնությունում, եթե այդ ակումբը ներկայացված չէ Բարձրագույն խմբի առաջնությունում:

7.07. Եթե Առաջին խմբի առաջնությունում մրցաշրջանի արդյունքներով մրցաշարային աղյուսակում առաջին տեղը զբաղեցրած թիմի մայր ակումբը ներկայացված է Բարձրագույն խմբի առաջնությունում, ապա Բարձրագույն խմբի մասնակցության իրավունքը փոխանցվում է Առաջին խմբի առաջնության մրցաշարային աղյուսակում հաջորդ ամենաբարձր տեղը զբաղեցրած թիմը ներկայացնող ակումբին՝ պայմանով, որ ակումբը բավարարում է սույն հոդվածի 4-րդ կետի պահանջներին:

7.08. Բարձրագույն խմբի առաջնության մասնակից թիմերի քանակը կարող է փոփոխվել մրցաշրջանից առաջ՝ ՀՖՖ-ի Գործադիր կոմիտեի համապատասխան որոշմամբ:

7.09. Առաջին խմբի առաջնությանը մասնակցելու իրավունք են ստանում սույն հոդվածի 3-րդ կետով «Մասնակցության հավաստագիր» ներկայացրած ակումբները, իսկ նոր կազմավորված ակումբները պարտավոր են դիմումի և «Մասնակցության հավաստագրի» հետ միասին ՀՖՖ ներկայացնել նաև՝

ա)իրավաբական անձի պետական գրանցման վկայականի պատճենը,

բ) ակումբի կանոնադրության պատճենը:

7.10. Գավաթի խաղարկությանը մասնակցելու իրավունք են ստանում Բարձրագույն խմբի առաջնության մասնակից ակումբների առաջին թիմերը և Առաջին խմբի առաջնության այն թիմերը, որոնց մայր ակումբները ներկայացված չեն Բարձրագույն խմբի առաջնությունում:

7.11. Սուպերգավաթի խաղարկությունն անցկացվում է նախորդ մրցաշրջանի Բարձրագույն խմբի առաջնության և Գավաթի խաղարկության հաղթող թիմերի միջև: Եթե Բարձրագույն խմբի առաջնության և Գավաթի խաղարկության հաղթողը միևնույն թիմն է, ապա Սուպերգավաթի խաղարկությունն անցկացվում է Բարձրագույն խմբի առաջնության հաղթողի և Գավաթի խաղարկության եզրափակչի մասնակցի միջև:

Հոդված 8. «Արդար խաղը» և գնահատման կարգը

8.01. Պրոֆեսիոնալ ֆուտբոլի Մրցումների շրջանակներում անցկացվող բոլոր խաղերը կազմակերպվում են ՀՖՖ-ի ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի կանոնադրություններում սահմանված «Արդար խաղի» սզբունքներով:

8.02. «Արդար խաղի» գնահատումը կատարվում է 1-10 բալային համակարգով հետևյալ տեսակետների հիման վրա՝

ա)կարմիր և դեղին քարտերի քանակ,

բ) մրցավարի նկատմամբ հարգալից վերաբերմունք,

գ) մրցակցի նկատմամբ հարգալից վերաբերմունք,

դ) խաղի թիմերի պաշտոնյաների պահվածք,

ե) հանդիսականների պահվածք:

8.03. «Արդար խաղը» գնահատվում է խաղի Պատվիրակի՝ մրցավարի հետ խորհրդակցության արդյունքում:

8.04. Մրցմանը մասնակից թիմերի «Արդար խաղի» դասակարգումը կատարվում է տարեկան մեկ անգամ՝ մրցաշրջանի ընթացքում վաստակած գնահատականների արդյունքով:

Հոդված 9. Պարգևատրումը

9.01. Պրոֆեսիոնալ ֆուտբոլի Մրցումների ավարտից հետո ՀՖՖ-ն կազմակերպում և անցկացնում է պարգևատրման պաշտոնական արարողություն:

9.02. Մրցանակակիր ակումբները Գավաթի խաղարկության եզրափակչի ավարտից մեկ, իսկ Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնությունների ավարտից երկու օր հետո ՀՖՖ են ներկայացնում պարգևատրման ենթակա անձանց ցուցակ:

9.03. Բարձրագույն խմբի առաջնությունում առաջին տեղը զբաղեցրած թիմին շնորհվում է տվյալ մրցաշրջանի «Հայաստանի չեմպիոն» կոչումը, իսկ ակումբը պարգևատրվում է հետևյալ մրցանակներով՝

ա) Բարձրագույն խմբի առաջնության գավաթ,

բ) ՀՖՖ-ի դիպլոմ,

գ) 10,000,000 (տաս միլիոն) ՀՀ դրամ,

դ) 40 հատ ոսկե մեդալ և ՀՖՖ-ի դիպլոմ ֆուտբոլիստների, պաշտոնյաների և ղեկավարների համար:

9.04. Բարձրագույն խմբի առաջնությունում երկրորդ և երրորդ տեղերը զբաղեցրած թիմերը, թիմերի ֆուտբոլիստները, պաշտոնյաները և ղեկավարները պարգևատրվում են 40 հատ համապատասխանաբար արծաթե և բրոնզե մեդալներով, ինչպես նաև ՀՖՖ-ի դիպլոմներով:

9.05. Առաջին խմբի առաջնությունում առաջին տեղը զբաղեցրած թիմը պարգևատրվում է հետևյալ մրցանակներով՝

ա) Առաջին խմբի առաջնության գավաթ,

բ) ՀՖՖ-ի դիպլոմ,

գ) 30 հատ փոքր ոսկե մեդալ և ՀՖՖ-ի դիպլոմ ֆուտբոլիստների, պաշտոնյաների և ղեկավարների համար:

9.06. Առաջին խմբի առաջնությունում երկրորդ և երրորդ տեղերը զբաղեցրած թիմերը, թիմերի ֆուտբոլիստները, պաշտոնյաները և ղեկավարները պարգևատրվում են ՀՖՖ դիպլոմներով՝ թվով 30 հատ:

9.07. Գավաթի խաղարկության պարգևատրման արարողությունը անցկացվում է մարզադաշտում եզրափակիչ խաղի ավարտից անմիջապես հետո:

9.08. Գավաթի խաղարկության եզրափակչում հաղթող թիմը պարգևատրվում է հետևյալ մրցանակներով՝

ա) Հայաստանի գավաթ,

բ) ՀՖՖ-ի դիպլոմ,

գ) 6,000,000 (վեց միլիոն) ՀՀ դրամ,

դ) 40 հատ ոսկե մեդալ և ՀՖՖ-ի դիպլոմ ֆուտբոլիստների, պաշտոնյաների և ղեկավարների համար:

9.09. Գավաթի խաղարկության եզրափակչում պարտվող թիմը, թիմի ֆուտբոլիստները, պաշտոնյաները և ղեկավարները պարգևատրվում են 40 հատ արծաթե մեդալներով և ՀՖՖ-ի դիպլոմներով:

9.10. Սուպերգավաթի խաղարկության հաղթող թիմը պարգևատրվում է հետևյալ մրցանակներով՝

ա) Հակոբ Տոնոյանի անվան սուպերգավաթ

բ) ՀՖՖ-ի դիպլոմ

գ) 2,000,000 (երկու միլիոն) ՀՀ դրամ

9.11. Սույն կանոնակարգով սահմանված Մրցումների համար նախատեսված բոլոր գավաթների բնօրինակները, որոնք ցուցադրվում են պարգևատրման և հանդիսավոր արարողությունների ժամանակ, հանդիսանում են ՀՖՖ սեփականությունը և պահվում են ՀՖՖ թանգարանում: Մրցանակակիր ակումբներին մշտական պահման են հանձնվում այդ գավաթների կրկնօրինակները:

9.12. Գավաթի խաղարկության եզրափակիչ խաղը և Սուպերգավաթի խաղարկությունը սպասարկող անձնակազմի անդամները պարգևատրվում են ՀՖՖ-ի դիպլոմներով:

9.13. Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնություններում «Արդար խաղի» մրցույթի հաղթող թիմերը պարգևատրվում են ՀՖՖ-ի դիպլոմներով:

9.14. Բարձրագույն խմբի առաջնության լավագույն ֆուտբոլիստի մրցույթն անցկացվում է առանձին սահմանված կարգով՝ ՀՖՖ-ի Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի հարցմամբ: Բարձրագույն խմբի առաջնության լավագույն ֆուտբոլիստի մրցույթին՝

ա) առաջին տեղը զբաղեցրած ֆուտբոլիստը պարգևատրվում է «ոսկե» գնդակ մրցանակով և ՀՖՖ-ի դիպլոմով,

բ) երկրորդ տեղը զբաղեցրած ֆուտբոլիստը պարգևատրվում է «արծաթե» գնդակ մրցանակով և ՀՖՖ-ի դիպլոմով,

գ) երրորդ տեղը զբաղեցրած ֆուտբոլիստը պարգևատրվում է «բրոնզե» գնդակ մրցանակով և ՀՖՖ-ի դիպլոմով:

9.15. Բարձրագույն խմբի առաջնության մրցաշրջանի լավագույն մարզչի մրցույթն անցկացվում է առանձին սահմանված կարգով՝ ՀՖՖ-ի Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի հարցմամբ: Մրցույթի արդյունքներով Բարձրագույն խմբի առաջնության լավագույն մարզիչը պարգևատրվում է մրցանակով և ՀՖՖ-ի դիպլոմով:

9.16. Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնությունների մրցաշրջանի լավագույն ռմբարկուները պարգևատրվում են «ոսկե խաղակոշիկ» մրցանակով և ՀՖՖ-ի դիպլոմով:

9.17. Պրոֆեսիոնալ Մրցումների մասնակիցների համար ՀՖՖ նախագահի կամ Գործադիր կոմիտեի որոշմամբ կարող են սահմանվել այլ պարգևատրումներ:

ԳԼՈՒԽ 2: ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Հոդված 10. Մրցումների վայրը

10.01. Մրցումների մասնակից ակումբները մրցակցին ընդունում են «Մասնակցության հավաստագրում» նշված, սեփականության, օգտագործման կամ վարձակալության իրավունքով իրենց պատկանող հիմնական և պահեստային մարզադաշտերում: Մարզադաշտերը պետք է համապատասխանեն ՀՖՖ Ենթակառուցվածքային կանոնակարգով սահմանված պահանջներին և ՀՖՖ Արտոնագրման բաժնի կողմից մրցաշրջանից առաջ ստացած լինեն համապատասխանելիության հավաստագիր:

10.02. Յուրաքանչյուր հանդիպմանը տվյալ մարզադաշտի պատրաստ լինելը որոշում է խաղի Պատվիրակը նախախաղային խորհրդակցության ժամանակ՝ հիմք ընդունելով ՀՖՖ Ենթակառուցվածքային և Պրոֆեսիոնալ Մրցումների անցկացման կանոնակարգերում սահմանված պահանջներն ու մրցավարի եզրակացությունը:

10.03. Խաղի օրն առաջացած արտակարգ իրավիճակների/ֆորս մաժորի, ինչպես նաև տվյալ հանդիպմանը մարզադաշտի՝ ցանկացած այլ պատճառով պատրաստ չլինելու դեպքում, հանդիպման մրցավարը կայացնում է վերջնական որոշում խաղը տվյալ մարզադաշտում անցկացնելու կամ հետաձգելու վերաբերյալ՝ նախապես խորհրդակցելով հանդիպման Պատվիրակի և ՀՖՖ-ի Ֆուտբոլի դեպարտամենտի հետ:

10.04. Մրցաշրջանի ընթացքում հիմնական մարզադաշտի՝ այս կամ այն պատճառով հանդիպումներն ընդունելու համար ոչ պիտանի դառնալու պարագայում, Պրոֆեսիոնալ ֆուտբոլի Մրցումների շրջանակներում անցկացվող հանդիպումը կարող է տեղափոխվել պահեստային մարզադաշտ, եթե հյուրընկալող ակումբն այդ մասին հանդիպումից առնվազն 15 օր առաջ գրավոր կերպով դիմել է ՀՖՖ-ի Ֆուտբոլի դեպարտամենտ և ստացել համապատասխան թույլտվություն: Մարզադաշտի տեղափոխման նպատակահարմարության վերաբերյալ վերջնական որոշումը կայացնում է ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտը:

10.05. Մարզադաշտերում պետք է բարձրացված լինեն ՀՀ, ՀՖՖ-ի և տվյալ առաջնության դրոշները:

Հոդված 11. Մրցումների անցկացման կարգը

11.01. Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնություններն անցկացվում են հետևյալ մրցակարգով: Բարձրագույն խմբի առաջնությունում թիմերը մրցում են երկու շրջան՝ մեկական անգամ սեփական և մրցակցի մարզադաշտերում, որից հետո մրցաշարային աղյուսակի առաջին վեց տեղերը զբաղեցրած թիմերը մրցում են միմյանց միջև (մեկական անգամ սեփական և մրցակցի մարզադաշտերում)՝ առաջնության մրցանակակիրներին որոշելու նպատակով, իսկ նույն մրցաշարային աղյուսակի յոթից տասներորդ տեղերը զբաղեցրած թիմերը մրցում են միմյանց միջև (մեկական անգամ սեփական և մրցակցի մարզադաշատերում) առաջնության ետնապահին որոշելու նպատակով: Առաջին փուլում վաստակած միավորները պահպանվում են:

Առաջին խմբի առաջնությունում թիմերը մրցում են երկու շրջան՝ մեկական անգամ սեփական և մրցակցի մարզադաշտերում: Գավաթի խաղարկությունն անցկացվում է սույն կանոնակարգի Հավելված 1-ում սահմանված «Հայաստանի ֆուտբոլի 2019-2020 մրցաշրջանի գավաթի խաղարկության կանոնների» համաձայն:

11.02. Սուպերգավաթի խաղարկությունն անցկացվում է Գավաթի խաղարկության եզրափակիչ խաղի կանոններով:

11.03. Ֆուտբոլիստների և պաշտոնյաների՝ Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնություններում ստացած դեղին և կարմիր քարտերը, ինչպես նաև որակազրկումները պահպանվում են Գավաթի խաղարկության շրջանակներում և հակառակը:

11.04. Սուպերգավաթի խաղարկության շրջանակներում ֆուտբոլիստների և պաշտոնյաների՝ ստացած դեղին և կարմիր քարտերը չեն պահպանվում պրոֆեսիոնալ մյուս Առաջնությունների շրջանակներում, բացառությամբ ՀՖՖ-ի Կարգապահական կոմիտեի որոշմամբ որակազրկումների:

11.05. Գավաթի և Սուպերգավաթի խաղարկությունների շրջանակներում անցկացվող հանդիպումները կազմակերպչական առումով հավասարազոր են Բարձրագույն և Առաջին խմբի առաջնությունների հանդիպումներին:

11.06. Սույն կանոնակարգով սահմանված պրոֆեսիոնալ Մրցումների շրջանակներում հանդիպումներն անցկացվում են՝ համաձայն ֆուտբոլ խաղի կանոնների և սույն կանոնակարգի: Ըստ այդմ՝

11.07. խաղը բաղկացած է 45 րոպե տևողությամբ 2 խաղակեսից և՝ խաղակեսերի միջև ընկած 15 րոպե ընդմիջումից,

11.08. խաղի սպասարկումն իրականացնում են ՀՖՖ-ի Մրցումների կազմակերպման և անցկացման բաժնի կողմից նշանակված պատվիրակը և ՀՖՖ-ի Մրցավարական և տեսչական բաժնի կողմից նշանակված մրցավարներն ու տեսուչը:

11.09. Խաղն սկսելուց առաջ, համաձայն ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի կողմից սահմանված ընդհանուր կարգի՝ խաղադաշտում թիմերի ֆուտբոլիստները և մրցավարները ողջունում են միմյանց և հանդիսականներին:

11.10. ՀՖՖ-ի կողմից պրոֆեսիոնալ Մրցումների շրջանակներում խաղերի ժամանակ առաջարկվող կամ կազմակերպվող մեկ րոպե լռության արարողության, ինչպես նաև բոլոր սոցիալական և հասարակական նշանակության, ռասիզմի դեմ պայքարի և արդար խաղի միջոցառումները ենթակա են պարտադիր կատարման ակումբների կողմից:

11.11. Մասնակից ակումբների կողմից խաղերի ժամանակ որևէ միջոցառման, այդ թվում մեկ րոպե լռության արարողության, կազմակերպման դեպքում նախաձեռնող ակումբը խաղից նվազագույնը 2 աշխատանքային օր առաջ պետք է գրավոր կերպով դիմի ՀՖՖ-ի Մրցումների կազմակերպման և անցկացման բաժին անհրաժեշտ համաձայնություն ստանալու նպատակով: Նախապես չնախատեսված կամ վերջին պահի առաջարկությունների դեպքում նախաձեռնող Ակումբը խաղից առաջ պետք է դիմի տվյալ խաղի Պատվիրակին համաձայնություն ստանալու նպատակով:

11.12. Բոլոր դեպքերում կազմակերպվող միջացառումները և արարողությունները չպետք է ազդեն խաղի մեկնարկային ժամի և հետհաշվարկի վրա:

Հոդված 12. Մրցաշարային աղյուսակում թիմերի դասակարգումը

12.01. Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնությունների մրցաշարային աղյուսակում թիմերը դասակարգվում են ըստ վաստակած միավորների: Յուրաքանչյուր խաղում հաղթանակի համար թիմին շնորհվում է 3 միավոր, ոչ-ոքիի համար՝ 1 միավոր, իսկ պարտության դեպքում միավոր չի շնորհվում:

12.02. Մրցաշարային աղյուսակում երկու և ավելի թիմերի միավորների հավասարության դեպքում թիմերի դասակարգման ժամանակ առավելությունը տրվում է այն թիմին, որը հավակնորդ թիմերի միջև խաղերում՝

ա) միմյանց միջև խաղերում վաստակել է ավելի շատ միավոր,

բ) միմյանց միջև խաղերում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,

գ) միմյանց միջև խաղերում խփել է ավելի շատ գոլ,

դ) Առաջնության բոլոր հանդիպումներում ունի ավելի շատ հաղթանակ,

ե) Առաջնության բոլոր հանդիպումներում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,

զ) Առաջնությունում ստացել է ավելի քիչ կարմիր քարտ,

է) Առաջնությունում ստացել է ավելի քիչ դեղին քարտ,

ը) արդար խաղի ցուցանիշով,

թ) ոսկե խաղով:

Հոդված 13. Խաղացանկը և անցկացման ժամկետները

13.01. Խաղաշրջանը սկսելուց նվազագույնը 20 օր առաջ ՀՖՖ-ի Գործադիր կոմիտեն հաստատում է սույն կանոնակարգով սահմանված Մրցումների խաղացանկերը:

13.02. Խաղացանկերը կազմվում են Բերգերի համակարգով:

13.03. Թիմերի մեկնարկային դիրքը մրցաշարային աղյուսակում որոշվում է վիճակահանությամբ:

13.04. Թիմերի երկու Պաշտոնական խաղերի միջև ընկած ժամանակահատվածը պետք է լինի առնվազն 72 ժամ:

13.05. Հաստատված խաղացանկերով սահմանված հանդիպման օրը կամ խաղասկզբի ժամը փոխելու անհրաժեշտության դեպքում նախաձեռնող Ակումբը պարտավոր է

հանդիպումից առնվազն 15 օր առաջ գրավոր կերպով դիմել ՀՖՖ-ի Ֆուտբոլի դեպարտամենտ: Հանդիպման օրվա կամ խաղասկզբի ժամի փոփոխման նպատակահարմարությունը և դրա վերաբերյալ վերջնական որոշումը կայացնում է ՀՖՖ-ի Ֆուտբոլի դեպարտամենտը:

13.06. Բարձրագույն և Առաջին խմբի առաջնությունների վերջին մրցափուլի բոլոր հանդիպումներն անցկացվում են նույն օրը և նույն ժամին:

13.07. Առաջնությունների անցկացման ժամկետներն են՝

ա) Բարձրագույն խումբ՝ 02.08.2019 - 30.05.2020թթ.

բ) Գավաթի խաղարկություն՝ 19.09.2019 - 08.05.2020թթ.

գ) Առաջին խումբ՝ 06.08.2019 - 31.05.2020թթ.

դ) Սուպերգավաթի խաղարկություն՝ 29.07.2019թ. (ենթակա է փոփոխման՝ կախված Եվրագավաթներում մասնակից թիմերի մրցելույթներից):

Հոդված 14. Չկայացած և անավարտ խաղերը

14.01. Անավարտ կամ չկայացած են համարվում այն խաղերը, որոնք ընդհատվել և չեն շարունակվել կամ չեն կայացել հետևյալ պատճառներով՝

ա) եղանակային պայմանների,

բ) արտակարգ իրավիճակների,

գ) լուսավորման համակարգի խափանման (անջատման), որը տեղի է ունեցել ոչ թե «դաշտի տեր» ակումբի մեղքով, այլ անհաղթահարելի արգելքների հետևանքով, և որը հնարավոր չի եղել վերականգնել 60 րոպեի ընթացքում,

դ) թիմ/եր/ի խաղադաշտը լքելու,

ե) երրորդ անձանց միջամտության դեպքում,

զ) մեկ կամ երկու թիմերի ֆուտբոլիստների, պաշտոնյաների և/կամ երկրպագուների անկարգապահ վարքագծի դեպքում,

է) հասարակական կարգի խախտման դեպքում, որն էապես ազդել է խաղի ընթացքի և արդյունքի վրա,

ը) թիմի կազմում 7-ից պակաս ֆուտբոլիստների առկայության դեպքում,

թ) այլ սուբյեկտիվ հանգամանքների առկայության պարագայում:

14.02. Եթե խաղը չի կայացել, ընդհատվել կամ չի շարունակվել սույն հոդվածի 1-ին մասի ա-գ կետերի համաձայն, անկախ Ակումբների կամ նրանց պատասխանատվության տակ գտնվող անձանց կամքից, ապա այն խաղացվում կամ շարունակվում է մեկ այլ օր՝ խաղի ընդհատման պահից: Տվյալ խաղի խաղացված ժամանակահատվածի հաշիվը, կարգապահական տույժերը, փոխարինումները մնում են ուժի մեջ (պահպանվում են ամբողջությամբ): Տվյալ խաղի շարունակությանը իրավունք ունեն մասնակցելու միայն խաղի արձանագրությունում նշված և խաղին մասնակցած ֆուտբոլիստները: Տվյալ խաղի անցկացման/շարունակման ժամկետների վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը պատկանում է ՀՖՖ-ին:

14.03. Սույն հոդվածի մյուս բոլոր կետերով ամրագրված դեպքերում խաղն ընդհատվելու կամ չկայանալու պարագայում արդյունքը չեղյալ է համարվում: Մեղավոր թիմին գրանցվում է տեխնիկական պարտություն 0-3 հաշվով, իսկ մրցակցին՝ հաղթանակ 3-0 հաշվով: Եթե խաղն ընդհատվել կամ չի կայացել երկու թիմերի մեղավորության կամ դիտավորության պատճառով, ապա երկու թիմերին գրանցվում է տեխնիկական պարտություն 0-3 հաշվով: ՀՖՖ-ի Կարգապահական կոմիտեն իրավասու է սահմանել այլ պատժամիջոցներ ՀՖՖ-ի Կարգապահական կանոնակարգի շրջանակներում:

14.04. Եթե անվայել վարքագիծ է դրսևորվել երկու թիմերի ֆուտբոլիստների կողմից, ապա խաղի արդյունքը չեղյալ է համարվում, և այդ դեպքում խաղը համարվում է կայացած, բայց թիմերի հաշվին միավոր չի գրանցվում:

14.05. Սույն հոդվածի 1-ին մասի գ) կետի պարագայում խաղի ընդհատման կամ չկայանալու դեպքում դաշտի տեր ակումբը պարտավոր է հյուր թիմին փոխհատուցել բոլոր փաստացի ծախսերը, ինչպես նաև փոխհատուցել ՀՖՖ-ին պատճառած կոմերցիոն բոլոր վնասները (բացառությամբ բաց թողնված սպասվելիք եկամտից), որոնք առաջացել են տվյալ խաղի հեռարձակման խափանման հետևանքով:

14.06. Չեղյալ համարված արդյունքների դեպքում գրանցված գոլերը ռմբարկուների հաշվարկում չեն ներառվում, իսկ կարգապահական բոլոր տույժերը, ինչպես նաև դեղին և կարմիր քարտերը մնում են ուժի մեջ:

14.07. Չկայացած կամ անավարտ խաղերը, որտեղ որևէ թիմի գրանցվել է տեխնիկական պարտություն, չեն կարող հաշվարկվել որպես որակազրկումը մարելու միջոց:

14.08. Ֆուտբոլիստների և ակումբի պաշտոնյաների որակազրկումները գործում են մինչև վերջիններիս կողմից բաց թողնվելիք խաղի, իսկ մեկից ավել խաղերի պարագայում՝ մինչև վերջին խաղի ավարտը ներառյալ:

Հոդված 15. Թիմերի չներկայանալը խաղին կամ Առաջնություններին մասնակցությունից հրաժարվելը

15.01. Մասնակից թիմերը պարտավոր են ժամանել մարզադաշտ խաղի նշանակված ժամից նվազագույնը 75 րոպե առաջ:

15.02. Թիմի/երի՝ խաղասկզբից 60 րոպե առաջ մարզադաշտ չժամանելը և ուշացման պատճառների մասին խաղի պատվիրակին չտեղեկացնելը գնահատվում է որպես խաղին չներկայանալ: Խաղի գլխավոր մրցավարը և Պատվիրակը պարտավոր են արձանագրել տվյալ փաստը համապատասխանաբար այդ խաղի արձանագրությունում և Պատվիրակի զեկույցում և ներկայացնել ՀՖՖ:

15.03. Թիմը համարվում է խաղին չներկայացած, եթե Պատվիրակին չի տեղեկացրել ուշացման պատճառների մասին և խաղասկզբին չի ներկայացել: Տեղեկացնելու դեպքում խաղասկիզբը կարող է հետաձգվել առավելագույնը 60 րոպեով, որի մասին որոշումը կայացնում է խաղի Պատվիրակը՝ խորհրդակցելով խաղի գլխավոր մրցավարի և ՀՖՖ-ի Ֆուտբոլի դեպարտամենտի հետ:

15.04. Սույն կանոնակարգի դրույթների պարբերաբար խախտման, ՀՖՖ-ի որոշումների չկատարման և իր գործողություններով կամ անգործության հետևանքով ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի հիմնարար սկզբունքների ոտնահարման պարագայում թիմը կարող է հեռացվել տվյալ Առաջնությունից ՀՖՖ-ի Կարգապահական կոմիտեի որոշմամբ ՀՖՖ-ի Կարգապահական կանոնակարգով սահմանված կարգով:

15.05. Եթե ՀՖՖ Կարգապահական կոմիտեի կողմից Առաջնությունից հեռացված թիմը մասնակցել է 50% կամ պակաս խաղերի, ապա խաղերի արդյունքները չեղյալ են համարվում: Հակառակ պարագայում անցկացված խաղերի արդյունքները մնում

են ուժի մեջ, իսկ այն թիմերին, որոնց հետ չեն կայանալու տվյալ առաջնության մնացած բոլոր հանդիպումները, գրանցվում է տեխնիկական հաղթանակ 0:3 հաշվով:

15.06. Այն թիմերը, որոնք հեռացվել են Բարձրագույն խմբի առաջնությունից ՀՖՖ-ի Կարգապահական կոմիտեի որոշմամբ կամ սեփական նախաձեռնությամբ հրաժարվել են Բարձրագույն խմբի առաջնության մասնակցությունից, ապա հաջորդ մրցաշրջանում կարող են մասնակցել միայն Առաջին խմբի առաջնությանը:

15.07. ՀՖՖ-ի Կարգապահական կոմիտեի կողմից տվյալ Առաջնությունից հեռացված կամ սեփական նախաձեռնությամբ մասնակցությունից հրաժարված թիմի մուտքավճարը չի վերադարձվում:

Հոդված 16. Բողոքարկումը

16.01. Բողոքարկման հիմք կարող է հանդիսանալ այն դեպքը, երբ դրսևորվում է ֆուտբոլ «Խաղի կանոնների» կամ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի Մրցումների կազմակերպման և անցկացման կանոնակարգի դրույթի այնպիսի խախտում, որը/ որոնք էապես ազդել է/են խաղի ելքի վրա:

16.02. Բողոքարկումն ընդունվում և գրանցվում է ՀՖՖ-ում, եթե ակումբի լիազորված անձը խաղից առավելագույնը 30 րոպե հետո պաշտոնապես դիմել է խաղի Պատվիրակին՝ լրացնելով խաղի արձանագրության համապատասխան բաժինը և հակիրճ ձևով ներկայացնելով բողոքարկման հիմքերը: Մրցակից թիմի ներկայացուցիչը ևս պետք է տեղեկացված լինի ներկայացված բողոքի մասին:

16.03. Բողոքարկման ենթակա չեն մրցավարի կայացրած փաստացի որոշումները:

16.04. Բողոքարկումը ՀՖՖ է ներկայացվում էլեկտրոնային փոստի միջոցով հանդիպման ավարտից ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում: Բողոքարկմանը կից ներկայացվում է բանկային փոխանցման կարգով ՀՖՖ-ի համապատասխան հաշվեհամարին 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ փոխանցման անդորրագիրը: Այն բողոքարկումները, որոնք չեն գրանցվել սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան, ինչպես նաև ներկայացվել են սահմանված ժամկետից ուշ, չեն ընդունվում ՀՖՖ-ի կողմից:

16.05. Բողոքարկումը քննարկվում է ՀՖՖ-ի համապատասխան մարմնի կողմից մեկ շաբաթվա ընթացքում:

16.06. Բողոքարկման նպատակով ՀՖՖ-ին վճարված գումարը վերադարձվում է միայն բողոքարկումը բոլոր կետերով հիմնավորված ճանաչվելու և բավարարվելու դեպքում:

ԳԼՈՒԽ 3: ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

Հոդված 17. Սպասարկման իրականացումը

17.01. Բարձրագույն խմբի առաջնության, Գավաթի և Սուպերգավաթի խաղարկությունների խաղերը կազմակերպելու և սպասարկելու համար ՀՖՖ-ն նշանակում է սպասարկող խումբ հետևյալ կազմով՝ պատվիրակ, տեսուչ, մրցավար, մրցավարի երկու օգնական, և 4-րդ պաշտոնյա:

17.02. Առաջին խմբի առաջնության խաղերը կազմակերպելու և սպասարկելու համար ՀՖՖ-ն նշանակում է սպասարկող խումբ հետևյալ կազմով՝ պատվիրակ, տեսուչ, մրցավար, մրցավարի երկու օգնական և 4-րդ պաշտոնյա:

17.03. Խաղերի սպասարկումն իրականացվում է համաձայն ֆուտբոլ «Խաղի կանոնների», ՖԻՖԱ միջազգային խորհրդի կողմից ընդունված փոփոխությունների, ՀՖՖ, ՈՒԵՖԱ և ՖԻՖԱ Պաշտոնական խաղերի անցկացումը կարգավորող այլ նորմատիվ փաստաթղթերի:

17.04. Մրցավարների, պատվիրակների և տեսուչների իրավունքները և պարտականությունները սահմանվում են ֆուտբոլ «Խաղի կանոնների», սույն Կանոնակարգի դրույթների և Պատվիրակի գործառույթները, մրցավարությունն ու տեսչությունը կանոնակարգող՝ ՀՖՖ-ի այլ փաստաթղթերի համաձայն:

Հոդված 18. Սպասարկող անձնակազմի նշանակումը

18.01. Հանդիպումը սպասարկող մրցավարական անձնակազմը և տեսուչը նշանակվում են ՀՖՖ-ի Մրցավարական և տեսչական բաժնի կողմից:

18.02. Հանդիպման պատվիրակը նշանակվում է ՀՖՖ- Մրցումների կազմակերպման և անցկացման բաժնի կողմից:

18.03. Առանձին դեպքերում ՀՖՖ նախաձեռնությամբ խաղերը սպասարկող մրցավարական անձնակազմը կարող է հրավիրվել արտերկրից:

18.04. Ակումբների կամ այլ կազմակերպությունների պահանջով կամ խնդրանքով սպասարկող անձնակազմի կամ վերջինիս առանձին անդամների նշանակում կամ փոխարինում չի կատարվում:

18.05. Սպասարկող անձնակազմի անդամները պարտավոր են հաստատել իրենց մասնակցությունը ոչ ուշ, քան խաղից 3 օր առաջ, բացառությամբ չնախատեսված դեպքերի, և ֆորս մաժորային իրավիճակների:

18.06. Խաղի ժամանակահատվածում, անհրաժեշտության դեպքում, տեսուչը որոշում է կայացնում, թե սպասարկող անձնակազմից ով կարող է փոխարինել մրցավարին:

Հոդված 19. Սպասարկող անձնակազմի անդամների գործառույթները

19.01. Սպասարկող անձնակազմի բոլոր անդամներին արգելվում է խաղին մեկնել (վերադառնալ) տվյալ խաղի մասնակից ակումբներից որևէ մեկի հետ, և/կամ իջևանել միասին:

19.02. Մրցավարը և/կամ 4-րդ պաշտոնյան պատասխանատու են արձանագրություններում նշված ֆուտբոլիստների անձերի ինքնության հաստատման համար:

19.03. Նախախաղային խորհրդակցությունից առաջ մրցավարը և պատվիրակը ստուգում են խաղադաշտի որակը և մարզադաշտի համապատասխանելիությունը: Դաշտի որակի հետ կապված՝ խաղի անցկացման վերջնական որոշումը կայացնում է մրցավարը:

19.04. Նախախաղային խորհրդակցության ժամանակ խաղի պատվիրակը ներկայացնում է հյուրընկալող թիմի կողմից նախապես պատրաստված խաղի կազմակերպման հետհաշվարկի ժամանակացույցը, որի կատարումը պարտադիր է խաղի մասնակիցների համար:

19.05. Խաղասկզբից 45 րոպե առաջ 4-րդ պաշտոնյան թիմերի հանդերձարաններում ստուգում է խաղացողների հանդերձանքը: Խաղադաշտ դուրս գալուց անմիջապես առաջ թիմերի հանդերձանքը ստուգում են մրցավարի օգնականները:

19.06. Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնություններում խաղի պատվիրակի բացակայության դեպքում տեսուչը պարտավոր է կատարել նրա՝ խաղի կազմակերպմանն առնչվող պարտականությունները:

19.07. Մրցավարը խաղավարտից հետո առավելագույնը մեկ ժամվա ընթացքում ձևակերպում է խաղի արձանագրությունը և էլեկտրոնային փոստով ուղարկում ՀՖՖ:

19.08. Պատվիրակն իր զեկույցը և «Արդար խաղի» գնահատման արձանագրությունը էլեկտրոնային փոստով ուղարկում է ՀՖՖ խաղավարտից հետո առավելագույնը երկու ժամվա ընթացքում:

19.09. Տեսուչն իր զեկույցը էլեկտրոնային փոստով ուղարկում է ՀՖՖ մինչև խաղի հաջորդ օրը՝ ժամը 12:00-ն:

19.10. Պատվիրակը խաղի կազմակերպման ընդհանուր պատասխանատուն է:

19.11. Որևէ թիմի՝ խաղից ուշանալու դեպքում, խաղասկզբի և խաղի անցկացման որոշումը կայացնում է Պատվիրակը:

19.12. Սպասարկող անձնակազմը պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները՝ խաղն անցկացնելու համար:

Հոդված 20. Մրցավարների, Պատվիրակների և տեսուչների վարձատրությունը

20.01. Մրցավարների, Պատվիրակների և տեսուչների աշխատանքի և գործուղման վարձատրությունը կատարում է ՀՖՖ-ն:

20.02. Չկայացած և անավարտ խաղերի, ինչպես նաև սույն Կանոնակարգի հոդված 15 կետ 3-ում նշված դեպքերում մրցավարների, Պատվիրակների և տեսուչի աշխատանքի և գործուղման վարձատրությունը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

ԳԼՈՒԽ 4: ՄԱՐԶԱԴԱՇՏԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 21. Անվտանգության ապահովումը

Անվտանգության ապահովումը կազմակերպվում է համաձայն ՀՖՖ Ապահովության և անվտանգության կանոնակարգի:

21.01. Դաշտի տեր ակումբը պետք է ապահովի մարզադաշտում և նրա հարակից տարածքներում ոստիկանների, ինչպես նաև կարգադրիչների և անվտանգության աշխատակիցների պարտադիր ներկայությունը: Անվտանգության աշխատակիցների և/կամ ոստիկանության բացակայության դեպքում խաղը չի անցկացվում:

21.02. Անվտանգության ապահովման և մարզադաշտ արգելված առարկաներ մուտք գործելու դեպքերը բացառելու համար դաշտի տեր ակումբը կարգադրիչների և անվտանգության աշխատակիցների միջոցով պետք է կազմակերպի հատուկ ստուգում (ներառյալ մարմնի և տվյալ անձի մոտ առկա պայուսակի ամբողջական զննումը, որը պետք է կատարի նույն սեռին պատկանող կարգադրիչը և/կամ անվտանգության աշխատակիցը):

21.03. Դաշտի տեր ակումբի կարգադրիչները և անվտանգության աշխատակիցները պետք է համագործակցեն ոստիկանության աշխատակիցների հետ, որպեսզի երաշխավորվի հետևյալը՝

ա) մարզադաշտ մուտք գործելու արգելք ստացած կամ մարզադաշտից հեռացված ցանկացած անձ չստանա մարզադաշտ մուտք գործելու թույլտվություն,

բ) վերոնշյալ անձը ամբողջ խաղի ընթացքում գտնվի մարզադաշտից բավականաչափ հեռավորության վրա՝ առնվազն մինչև բոլոր հանդիսատեսների հեռանալը:

21.04. Մարզադաշտում գտնվող հանդիսատեսին դաշտի տեր ակումբը պետք է արգելի՝

ա) մարզադաշտում տեղի ունեցող մարզական միջոցառման կազմակերպիչների, մարզադաշտի սեփականատիրոջ և/կամ վարձակալի կողմից արգելված վայրերում ծխելը,

բ) իրերի, այդ թվում՝ բանջարեղենի, մրգերի կամ ցանկացած տեսակի տարայով կամ առանց տարայի հեղուկի նետումը հանդիպման մասնակիցների, հանդիսատեսի, այլ անձանց, ինչպես նաև խաղադաշտի ուղղությամբ կամ հենց խաղադաշտի վրա,

գ) հանդիսատեսների օգտագործման համար չնախատեսված շինություններում ու կառույցներում գտնվելը (ֆասադներ, ցանկապատեր, պատեր, արգելապատնեշներ, լուսավորության սյուներ, հեռուստատեսային տեսախցիկների պլատֆորմներ, ծառեր, տանիքներ և այլն):

դ) բղավոցները, վանկարկումները, երգերի կատարումը, նշանների և/կամ այլ խորհրդանիշների հասարակական ցուցադրումը, տպագիր նյութերի տարածումը, ինչպես նաև այլ գործողություններ, որոնք վիրավորում են միջոցառման մասնակիցների և հանդիսատեսի արժանապատվությունը, վարկաբեկում են նրանց, կրում են ծայրահեղական բնույթ կամ ուղղված են ռասսայական, սոցիալական, ազգային խտրականություն առաջացնելուն,

ե) խաղին ներկայանալ կենդանիների հետ,

զ) ցանկացած տեսակի, այդ թվում՝ նաև ինքնապաշտպանության համար նախատեսված զենք, զինամթերք, կտրող և ծակող առարկաներ, արցունքաբեր և նյարդային ազդեցության գազային բալոններ, որպես զենք օգտագործվելու ենթակա կամ հանդիսատեսների առողջությանը հավանական վնաս պատճառող այլ առարկաներ, այդ թվում՝ հովանոցներ, ծանր առարկաներ և այլն՝ բացառությամբ թմբուկների,

է) դյուրավառ նյութեր՝ անկախ դրանց տեսակից և նշանակետից, ներառյալ այն նյութերը, որոնք կարող են օգտագործվել դյուրավառ նյութերի կամ ծուխի պատրաստման համար (բացառությամբ ծխախոտի, գրպանի պլաստմասե կրակայրիչի), այդ թվում՝ ծխարձակիչներ, ճայտրուկներ, ազդանշանային հրթիռներ, պայթուցիկ, թունավոր և հոտավետ նյութեր, ռադիոակտիվ նյութեր, գազի բալոններ, վառելանյութեր (բացառությամբ՝ լուցկիների, կրակայրիչների և ծխախոտի):

21.05. Ապահովել հանդիսատեսների (երկրապագուների) մուտքը մարզադաշտի տարածք տոմսերի (ներառյալ՝ ակումբային քարտի, աբոնեմենտի, հրավերի), իսկ խաղի կազմակերպմանը ներգրավված աշխատակիցների և ԶԼՄ-ների համար հաստատված հավատարմագրերի առկայության դեպքում, որոնք մարզադաշտ մտնելու իրավունք են տալիս և որոնց ստուգումը իրականացվում է տվյալ ակումբի կարգադրիչների կողմից: Դաշտի տեր ակումբը իրավասու է սահմանափակել հանդիսատեսների մուտքը մարզադաշտ հանդիպման մեկնարկից 45 րոպե անց անվտանգության աշխատակիցների միջոցով: Հանդիսատեսներին պետք է

նախապես տեղեկացնել մարզադաշտ մուտք գործելու արգելքի մասին՝ մուտքի տոմսերի և մարզադաշտի յուրաքանչյուր մուտքի մոտ տեղակայված հատուկ ցուցանակների վրա տեղեկատվություն տեղադրելու միջոցով:

21.06. Դաշտի տեր ակումբը պետք է արգելի՝

ա) ալկոհոլային խմիչքների հանրային վաճառք կամ որևէ շրջանառություն մարզադաշտում կամ շրջակայքում,

բ) բոլոր ոչ ալկոհոլային խմիչքները պետք է վաճառվեն և շրջանառվեն վտանգ չներկայացնող թղթե կամ բաց պլաստիկ բաժակներով:

21.07. Դաշտի տեր ակումբը ոստիկանության աշխատակցի կամ մարզադաշտի անվտանգության պատասխանատուի հետ միասին պետք է կանխի մարզադաշտի ներսում/մերձակայքում հանդիսատեսի (երկրպագուների) կողմից իրականացվող ցանկացած սադրիչ գործողություն (ֆուտբոլիստների, մրցավարների, հակառակորդ թիմի երկրպագուների հանդեպ սադրիչ խոսքեր, ռասիստական վարքագիծ, պաստառներ կամ դրոշներ և այլն):

21.08. Նման գործողություններ տեղի ունենալու դեպքում դաշտի տեր ակումբը, ոստիկանության աշխատակիցը կամ տվյալ ակումբի անվտանգության պատասխանատուն պետք է այդ մասին հայտարարություն տարածեն մարզադաշտի Ռադիոհանգուցային համակարգի միջոցով կամ հեռացնեն ցանկացած վիրավորական նյութերը մարզադաշտի տարածքից:

21.09. Ապահովել խաղից առաջ և հետո հյուր թիմի և սպասարկող անձնակազմի անվտանգությունը:

ԳԼՈՒԽ 5: ԴԱՇՏԻ ՏԵՐ ԱԿՈՒՄԲԸ

Հոդված 22. Դաշտի տեր ակումբի պարտականությունները

22.01. Յուրաքանչյուր խաղին տրամադրել առնվազն 10 գնդակ, որոնք պետք է համապատասխանեն ֆուտբոլ «Խաղի կանոնների» 02 կանոնի 1-ին հոդվածի պահանջներին:

22.02. Մրցավարների օգնականներին տրամադրել փոխարինման լուսատախտակ սարքին վիճակում և նվազագույնը 2 դրոշակ:

22.03. Տրամադրել մրցավարների համար նախատեսված հանդերձարան:

22.04. Տրամադրել Պատվիրակի համար նախատեսված սենյակ՝ հոսանքի և ինտերնետի առկայությամբ:

22.05. Արգելել կողմնակի, որակազրկված անձանց մուտքը մրցավարական հանդերձարան և Պատվիրակի սենյակ:

22.06. Տրամադրել մամուլի ասուլիսի սենյակ, որը պետք է գտնվի մարզադաշտի ներսում և կահավորված լինի բարձրադիր սեղանով, ամբիոն-հարթակով, տեսախցիկի հարթակով, և պատշաճ լուսավորությամբ՝ տեսահեռարձակման համար:

22.07. Տրամադրել մամուլի ասուլիսների համար նախատեսված սենյակը նախախաղային խորհրդակցության համար:

22.08. Տրամադրել հակադոպինգային ստուգման պայմաններին համապատասխանող սենյակ:

22.09. Ապահովել դեֆիբրիլիատորով բժշկական ծառայության բուժանձնակազմի մեքենայի առկայությունը:

22.10. Խաղից մեկ օր առաջ, հյուր թիմի պահանջով, վերջինիս տրամադրել խաղադաշտ այն մարզադաշտում, որտեղ անցկացվելու է պաշտոնական հանդիպումը առավելագույնը 60 րոպե տևողությամբ նախախաղային մարզում անցկացնելու նպատակով: Եղանակային անբարենպաստ պայմանների պարագայում հյուր թիմին կարող է տրամադրվել որակապես հավասարազոր այլընտրանքային խաղադաշտ:

22.11. Առավել կարևոր հյուրերի (VIP) համար առանձնացված գոտում յուրաքանչյուր խաղին տրամադրել 5 նստատեղ ՀՖՖ-ի ներկայացուցիչների համար (ի լրումն Պատվիրակի և տեսուչի համար կենտրոնական հատվածում նախատեսված

նստատեղերի) և 10 նստատեղ հյուր թիմի ղեկավար անձնակազմի և պաշտոնյաների համար:

22.12. Հյուր թիմի երկրպագուների համար առանձնացնել և տրամադրել առանձին հատված՝ մարզադաշտի ընդհանուր տարողության առնվազն 5% չափով:

22.13. Ապահովել 10-12 գնդակ վերադարձնող պատանի ֆուտբոլիստների ներկայությունը խաղի ընթացքում, որոնց մարզահագուստը պետք է տարբերվի մրցող թիմերի և մրցավարների մարզահագուստից:

22.14. Տրամադրել հյուր թիմին և սպասարկող անձնակազմին համապատասխան քանակի ջուր, հյութ, թեյ և այլն:

ԳԼՈՒԽ 6: ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հոդված 23. Նախախաղային խորհրդակցությունը

23.01. Յուրաքանչյուր հանդիպումից 2 ժամ առաջ խաղի Պատվիրակի ղեկավարությամբ անցկացվում է նախախաղային խորհրդակցություն, որին մասնակցում են՝

ա) խաղը սպասարկող մրցավարների ներկայացուցիչը,

բ) մրցող ակումբների ներկայացուցիչները,

գ) մարզադաշտի տնօրինության ներկայացուցիչը,

դ) ոստիկանության ներկայացուցիչը,

ե) դաշտի տեր ակումբի անվտանգության հարցերով պատասխանատուն,

զ) գնդակ վերադարձնող պատանի ֆուտբոլիստների մարզիչը:

23.02. Դաշտի տեր ակումբը պատասխանատու է գ-զ կետերով սահմանված պահանջների կատարման համար:

23.03. Ակումբների կողմից նախախաղային խորհրդակցությանը մասնակցող անձինք մրցավարի ստուգմանն են ներկայացնում ֆուտբոլիստների և դարպասապահի խաղային մարզահագուստն ամբողջությամբ՝ մարզաշապիկ, կիսավարտիք (կամ

սպորտային տաբատ դարպասապահի դեպքում), կիսագուլպա, դարպասապահի ձեռնոցներ, մարզումային ժիլետներ և գնդակը վերադարձնող պատանի ֆուտբոլիստների մարզահագուստ: Հիմնական հանդերձանքից բացի պետք է ներկայացվեն նաև պաշտպանիչ դիմակներ, պաշտպանիչ գլխարկներ, ֆուտբոլիստների անհատական ցուցանիշներն ապահովող էլեկտրոնային սարքավորումներ, գունավոր էլաստիկ ժապավեններ, եթե դրանք օգտագործվելու են:

Հոդված 24. Թիմերի ժամանումը մարզադաշտ և եղանակային պայմանները

24.01. Թիմերը ժամանում են մարզադաշտ խաղից նվազագույնը 75 րոպե առաջ:

24.02. Պրոֆեսիոնալ Մրցումների շրջանակներում -15 աստիճանից ցածր և +40 աստիճանից բարձր եղանակային պայմանների պարագայում խաղի Պատվիրակը կամ տեսուչը կայացնում են որոշում խաղի անցկացման հնարավորության վերաբերյալ:

24.03. +32 և բարձր ջերմաստիճանի դեպքում խաղի ժամանակ կիրառվում է ջրային դադար մեկ րոպե տևողությամբ՝ խաղի 30-րդ և 75-րդ րոպեներին: Ջրային դադարի վերաբերյալ որոշումը կայացնում է խաղի Պատվիրակը նախախաղային խորհրդակցության ժամանակ և տեղյակ պահում բոլոր շահագրգիռ կողմերին:

ԳԼՈՒԽ 7: ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ

Հոդված 25. Ֆուտբոլիստների մասնակցությունը

25.01. Ֆուտբոլիստները Մրցումներին մասնակցում են ֆուտբոլիստի անձնագրով կամ բացառության կարգով՝ քաղաքացիական անձնագրով, իսկ Պաշտոնյաները՝ մասնակցի քարտով, բացառության կարգով ՀՖՖ-ի Մրցումների կազմակերպման և անցկացման բաժնի կողմից տրամադրված հատուկ փաստաթղթով:

25.02. Թիմերի ներկայացուցիչները խաղասկզբից ոչ ուշ, քան 60 րոպե առաջ 4-րդ պաշտոնյային և խաղի պատվիրակին են հանձնում խաղի մեքենագրված արձանագրությունը, որտեղ յուրաքանչյուր թիմում պետք է նշված լինեն առավելագույնը թիմի 23 ֆուտբոլիստների՝ ՀՖՖ-ի կողմից տրամադրված ֆուտբոլային անձնագրերի անձնական համարները, մարզաշապիկի համարները, անունները, ազգանունները, ինչպես նաև պաշտոնյաների՝ ՀՖՖ-ի կողմից տրամադրված պաշտոնյաների քարտերը, քարտերի անձնական համարները, անունները և ազգանունները: Թիմի կազմը պետք է վավերացված լինի Ակումբի իրավասու Պաշտոնյայի կողմից, ինչպես նաև տվյալ թիմի բժշկի կողմից: Ֆուտբոլիստների անձնագրերը և Պաշտոնյաների մասնակցի քարտերը խաղից հետո վերադարձվում են ակումբների ներկայացուցիչներին:

25.03. Խաղին կարող են մասնակցել միայն խաղի արձանագրությունում նշված ֆուտբոլիստները: Խաղի արձանագրությունում նշված ֆուտբոլիստները կարող են ենթարկվել հակադոպինգային ստուգման, որի մասին նախապես չի տեղեկացվում:

25.04. Խաղի արձանագրության մեջ լրացվում են այն ֆուտբոլիստների տվյալները, ովքեր հայտավորված են, ինչպես նաև որակազրկված չեն մասնակցելու տվյալ խաղին: Արձանագրության մեջ նշվում է մինչև 23 (11 հիմնական և 12 փոխարինող (պահեստային)) ֆուտբոլիստների տվյալներ:

25.05. Պրոֆեսիոնալ Առաջնություններին օտարերկրյա ֆուտբոլիստների մասնակցությունը չի արգելվում:

25.06. Արձանագրության մեջ նշված ֆուտբոլիստներից Բարձրագույն խմբի պարագայում նվազագույնը 7-ը, իսկ Առաջին խմբի պարագայում նվազագույնը 10-ը պետք է լինեն ՀՀ քաղաքացի, անկախ արձանագրության մեջ նշվող ֆուտբոլիստների քանակից: Ֆորս մաժորային դեպքերում՝ ըստ ֆուտբոլ «Խաղի կանոնների», եթե արձանագրության մեջ լրացվում է 7 ֆուտբոլիստ, այդ դեպքում՝ ՀՀ քաղաքացիները պետք է լինեն նվազագույնը 4-ը, և նվազագույնը 6 պաշտոնյա, որոնցից մեկը պարտադիր պետք է լինի բժիշկ: Առանց ակումբների բժիշկների՝ խաղը չի անցկացվում:

25.07. Խաղերին մասնակցելու իրավունք ունեն 17 տարին լրացած պրոֆեսիոնալ ֆուտբոլիստները:

25.08. Խաղին կարող են մասնակցել 15-17 տարեկան ֆուտբոլիստներ՝ բուժհաստատության տեղեկանքով, որի բնօրինակը անհրաժեշտ է խաղից առաջ ներկայացնել մրցավարական անձնակազմին:

25.09. Մարզիչները որպես ֆուտբոլիստ հանդես գալու իրավունք չունեն:

25.10. Խաղի ընթացքում տեխնիկական գոտում գտնվելու և պահեստայինների նստարանին նստելու իրավունք ունեն միայն խաղի արձանագրությունում նշված անձինք:

25.11. Արգելվում է ցանկացած անձի ծխելը մարզադաշտի տեխնիկական գոտում, խաղադաշտի հարակից տարածքներում, մեկնաբանների և լրագրողների համար նախատեսված խցիկներում, մամուլի ասուլիսների սենյակում, որը պետք է ապահովի դաշտի տեր ակումբի անվտանգության աշխատակիցը՝ ակումբի կարգադրիչների օգնությամբ:

25.12. Բարձրագույն խմբի առաջնության մասնակից թիմերի կազմում խաղին կարող են մասնակցել միևնույն ակումբի Առաջին խմբի առաջնության մասնակից թիմի ֆուտբոլիստները՝ առանց քանակային սահմանափակման: Պատանեկան թիմերի ֆուտբոլիստները ևս կարող են մասնակցել առանց քանակային սահմանափակման միայն այն դեպքում, եթե ունեն բժշկական տեղեկանք բուժհաստատության բժշկի կողմից ստորագրված և կնքված:

25.13. Առաջին խմբի առաջնության մասնակից թիմերի կազմում խաղին կարող են մասնակցել միևնույն Ակումբի պատանեկան թիմերի ֆուտբոլիստներ՝ առանց քանակային սահմանափակման, միայն այն դեպքում, եթե ունեն բժշկական տեղեկանք բուժհաստատության բժշկի կողմից ստորագրված և կնքված:

25.14. Առաջին խմբի առաջնության մասնակից թիմերի կազմում կարող են մասնակցել միևնույն ակումբի Բարձրագույն խումբը ներկայացնող թիմից առավելագույնը 5 ֆուտբոլիստ՝ բացառությամբ խաղաշրջանի վերջին 4 խաղի:

25.15. Առաջին խմբի առաջնության մասնակից թիմերի կազմում միաժամանակ խաղադաշտում կարող են գտնվել 23 տարեկանից բարձր առավելագույնը 5

ֆուտբոլիստներ՝ բացառությամբ Առաջին խմբի առաջնությանը մասնակցող այն թիմերի, որոնք ներկայացված չեն Բարձրագույն խմբի առաջնությունում:

Հոդված 26. Ֆուտբոլիստների փոխարինումները

26.01. Բարձրագույն խմբի առաջնության խաղերում թույլատրվում է կատարել առավելագույնը 3 փոխարինում:

26.02. Առաջին խմբի առաջնության խաղերում թույլատրվում է կատարել առավելագույնը 4 փոխարինում:

26.03. Խաղի ընթացքում պահեստային ֆուտբոլիստները կարող են լքել տեխնիկական գոտին միայն նախավարժանք կատարելու նպատակով: Նախախաղային խորհրդակցության ժամանակ մրցավարը որոշում է նախավարժանք անցկացնելու վայրը և միաժամանակ նախավարժանք անցկացնող ֆուտբոլիստների քանակը՝ առավելագույնը 3 հոգի: Թիմերի ֆիզիկական պատրաստվածության մարզիչները, ովքեր նշված են արձանագրությունում, նույնպես կարող են մասնակցել նախավարժանքին:

26.04. Երկու թիմերի խաղի հաստատված արձանագրությունը մրցավարին հանձնելուց հետո՝ մինչ սկզբնահարվածը, չի թույլատրվում կատարել փոփոխություններ, բացառությամբ հետևյալ դեպքերի՝

ա) եթե հիմնական կազմում արձանագրության մեջ նշված 11 ֆուտբոլիստներից որևէ մեկը ի վիճակի չէ սկսել խաղը անսպասելի ֆիզիկական անկարողության պատճառով, ապա նա կարող է փոխարինվել միայն արձանագրությունում նշված 12 փոխարինողներից ցանկացած մեկով: Համապատասխան փոխարինողը/ները կարող է/են փոխարինվել միայն հայտավորված ֆուտբոլիստներով, ով/ովքեր նշված չէ/չեն տվյալ խաղի արձանագրությունում: Այս պարագայում փոխարինողների քանակը չի նվազեցվում և խաղի ընթացքում երեք խաղացողներ կարող են փոխարինվել:

բ) Եթե խաղի արձանագրությունում նշված 12 փոխարինողներից որևէ մեկն անսպասելի ֆիզիկական անկարողության/վնասվածքի պատճառով ի վիճակի չէ մասնակցել խաղին, ապա նա/նրանք կարող է/են փոխարինվել միայն

հայտավորված ֆուտբոլիստով/ներով, ով/ովքեր նշված չէ/չեն տվյալ խաղի արձանագրությունում:

գ) Եթե դարպասապահներից որևէ մեկը անսպասելի ֆիզիկական անկարողության /վնասվածքի պատճառով ի վիճակի չէ մասնակցել խաղին, նա/նրանք կարող է/են փոխարինվել միայն հայտավորված դարպասապահներով, ով/ովքեր նշված չէ/չեն տվյալ խաղի արձանագրությունում:

26.05. Վերը նշված դեպքերում ՀՖՖ պահանջով ակումբը պարտավոր է ներկայացնել համապատասխան բժշկական եզրակացություն:

ԳԼՈՒԽ 8: ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ և ՎԵՐԱՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 27. Ֆուտբոլիստների հայտավորումը և վերահայտավորումը

27.01. Բարձրագույն խմբի մասնակից թիմերի կազմում թույլատրվում է հայտավորվել մինչև 10 պաշտոնյայի և մինչև 30 ֆուտբոլիստի, որոնցից նվազագույնը 7 ֆուտբոլիստները, անկախ հայտավորվողների քանակից, պետք է լինեն ՀՀ քաղաքացիներ: Պաշտոնյաների ցուցակը պետք է ընդգրկի առնվազն հետևյալ պաշտոնները՝

ա) գլխավոր մարզիչ, ով պետք է ունենա ՈՒԵՖԱ-ի «Պրո» կարգի մարզչական արտոնագիր,

բ) գլխավոր մարզչի առաջին օգնական, ով պետք է ունենա ՈՒԵՖԱ-ի «Պրո» կարգի մարզչական արտոնագիր,

գ) դարպասապահների մարզման և ֆիզիկական պատրաստվածության մարզիչներ, ովքեր պետք է ունենան նվազագույնը ՈՒԵՖԱ-ի «Բ» կարգի մարզչական արտոնագիր,

դ) բժիշկ, ով պետք է ունենա բարձրագույն բժշկական կրթություն,

ե) ֆիզիոթերապևտ, ով պետք է ունենա բարձրագույն բժշկական կամ ֆիզիոթերապևտի կրթություն:

27.02. Հայտավորման պատուհանի առաջին օրվանից սկսած մինչ տվյալ խաղաշրջանի ավարտը Բարձրագույն խմբի առաջնության մասնակից թիմի կազմում պետք է հայտավորված լինեն նվազագույնը 20 ֆուտբոլիստներ, որոնցից 7-ը՝ ՀՀ քաղաքացիներ: Նշված ֆուտբոլիստների քանակների չապահովման դեպքում ՀՖՖ-ի Կարգապահական կոմիտեն կայացնում է որոշում տվյալ հոդվածի խախտման վերաբերյալ:

27.03. Առաջին խմբի առաջնության մասնակից թիմերի կազմում թույլատրվում է հայտավորել մինչև 10 պաշտոնյայի, և մինչև 30 ֆուտբոլիստի, որոնցից նվազագույնը 10 ֆուտբոլիստներ, անկախ հայտավորվողների քանակից, պետք է լինեն ՀՀ քաղաքացիներ: Պաշտոնյաների ցուցակը պետք է ընդգրկի առնվազն հետևյալ պաշտոնները՝

ա) գլխավոր մարզիչ, ով պետք է ունենա նվազագույնը ՈՒԵՖԱ-ի «Բ» կարգի մարզչական արտոնագիր,

բ) գլխավոր մարզչի առաջին օգնական, ով պետք է ունենա նվազագույնը ՈՒԵՖԱ-ի «Բ» կարգի մարզչական արտոնագիր,

գ) բժիշկ, ով պետք է ունենա բարձրագույն բժշկական կրթություն,

դ) ֆիզիոթերապևտ, ով պետք է ունենա բարձրագույն բժշկական կամ ֆիզիոթերապևտի կրթություն:

27.04. Հայտավորման պատուհանի առաջին օրվանից սկսած մինչ տվյալ խաղաշրջանի ավարտը Առաջին խմբի առաջնության մասնակից թիմի կազմում պետք է հայտավորված լինեն նվազագույնը 18 ֆուտբոլիստներ, որոնցից 10-ը՝ ՀՀ քաղաքացիներ: Նշված ֆուտբոլիստների քանակների չապահովման դեպքում ՀՖՖ-ի Կարգապահական կոմիտեն կայացնում է որոշում տվյալ հոդվածի խախտման վերաբերյալ:

27.05. Խաղաշրջանի ընթացքում մասնակից բոլոր թիմերի կազմում հայտավորված ֆուտբոլիստներից նվազագույնը 8-ը պետք է լինեն Հանրապետությունում մարզված, որոնցից 4-ը տվյալ ակումբում մարզված:

ա) Հանրապետությունում մարզված համարվում են այն ֆուտբոլիստները, ովքեր 15 տարեկանից մինչ 21 տարեկանը գրանցված են եղել հանրապետության որևէ ակումբում կամ ակումբներում նվազագույնը 3 խաղաշրջան (տարի):

բ) Ակումբում մարզված համարվում են այն ֆուտբոլիստները, ովքեր 15 տարեկանից մինչ 21 տարեկան գրանցված են եղել տվյալ ակումբում և նվազագույնը 3 խաղաշրջան (տարի) տվյալ թիմի կազմում մասնակցել են պաշտոնական հանդիպումների:

գ) Այն ակուբները, որոնք չունեն ա և բ կետերին համապատասխան ֆուտբոլիստներ, այդ պարագայում նրանց հայտավորման ցուցակը կրճատվում է՝ պարտադիր պահպանելով 1-ին և 2-րդ կետերում նշված նվազագույն ֆուտբոլիստների քանակները:

27.06. Հայտավորման և վերահայտավորման համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) ակումբները հայտավորման փաստաթղթերը, ինչպես նաև ֆուտբոլիստների առողջական վիճակի մասին տեղեկանքները, որոնք պետք է հաստատված լինեն բուժհաստատության կողմից, ներկայացնում են ՀՖՖ-ի Մրցումների կազմակերպման և անցկացման բաժնին՝ նախապես հաստատված գրաֆիկով, որը սահմանում է ՀՖՖ Մրցումների կազմակերպման և անցկացման բաժինը,

բ) հայտավորման համար անհարաժեշտ է ներկայացնել մուտքավճարի բանկային փոխանցման անդորրագրի պատճենը,

գ) ակումբի ղեկավարի կողմից ստորագրված և կնքված հայտավորման/վերահայտավորման դիմումը,

դ) հայտավորվող/վերահայտավորվող յուրաքանչյուր ֆուտբոլիստի համար անհրաժեշտ է ներկայացնել բուժհաստատության կողմից հաստատված տեղեկանք՝ ֆուտբոլիստի առողջական վիճակի մասին:

27.07. Ֆուտբոլիստին կամ պաշտոնյային հայտից հանելը կատարվում է առաջնության ընթացքում՝ ակումբի ղեկավարի կողմից ստորագրված հայտից հանելու դիմումի համաձայն, որին անհրաժեշտ է կցել հայտից հանվող պաշտոնյայի անձնական քարտը:

27.08. Հայտավորման ժամկետը սահմանվում է տվյալ առաջնության պաշտոնական առաջին խաղից 15 օր առաջ և ավարտվում է 1 օր առաջ:

27.09. Թիմը կարող է հայտավորել կամ վերահայտավորել այն ֆուտբոլիստներին, ովքեր գրանցված են տվյալ Ակումբում: Ֆուտբոլիստների գրանցումը կատարվում է ՀՖՖ-ի «Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության» կանոնակարգի համաձայն:

27.10. Հայտավորման ժամկետի լրանալուց հետո թիմերում վերահայտավորումը կատարվում է սահմանված ժամկետներում՝ 02.08.2019-01.09.2019 և 01.02.2020-28.02.2020թթ.:

27.11. Վերահայտավորվող յուրաքանչյուր ֆուտբոլիստի համար ակումբը վճարում է 25.000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ, բացառությամբ՝

ա) զինվորական ծառայության մեջ գտնվող ֆուտբոլիստի,

բ) պրոֆեսիոնալ այն ֆուտբոլիստի, ով խաղաշրջանից առաջ գրանցված է տվյալ ակումբում, բայց չի հայտավորվել ակումբը ներկայացնող որևէ այլ թիմում:

27.12. Թիմը կարող է հայտավորել կամ վերահայտավորել այն պաշտոնյաներին, որոնց պայմանագրերը մուտքագրված են ՀՖՖ Արտոնագրման բաժնի կողմից:

27.13. Պաշտոնյաներ համարվում են հետևյալ անձինք՝

ա) մարզիչ,

բ) բժիշկ,

գ) մերսող/ֆիզիոթերապևտ,

դ) ադմինիստրատոր,

ե) թարգմանիչ:

27.14. Պաշտոնյաները կարող են վերահայտավորվել առանց ժամկետային սահմանափակման:

27.15. Սահմանված ժամկետներից դուրս վերահայտավորվել կարող են միայն հետևյալ ֆուտբոլիստները՝

ա) արտասահմանից ժամանած այն ֆուտբոլիստները, ում տրանսֆերային հարցման պատասխանը ՀՖՖ-ն ստացել է տրանսֆերային պատուհանի փակվելուց հետո. նմանատիպ բոլոր հարցերը կարգավորվում են համաձայն ՀՖՖ-ի «Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի»,

բ) զորացրված ֆուտբոլիստները, ում վերահայտավորումը կատարվել է ոչ ուշ, քան նրանց զորացրվելուց 30 օրվա ընթացքում,

գ) մինչև 18 տարեկան այն ֆուտբոլիստները, ովքեր չեն մասնակցել տվյալ մրցաշրջանի պրոֆեսիոնալ Առաջնություններին:

27.16. Խաղաշրջանի ընթացում ֆուտբոլիստը կարող է տեղափոխվել մի ակումբից մյուսն ընդամենը մեկ անգամ: Վարձակալության ժամկետը լրանալուց հետո ֆուտբոլիստի վերադարձը մայր ակումբ տեղափոխություն չի համարվում: Տեղափոխություն է համարվում այն դեպքում, եթե ֆուտբոլիստը դուրս է գալիս նախորդ ակումբի գրանցումից և հայտից, ապա գրանցվում և վերահայտավորվում է նոր թիմի կազմում: Վարձակալության պայմանագրի ժամկետը լրանալուց հետո ֆուտբոլիստի վերադարձը մայր ակումբ հիմք չի հանդիսանում վերահայտավորման ժամկետները խախտելու համար:

ԳԼՈՒԽ 9: ՄԱՐԶԱՀԱԳՈՒՍՏԸ

Հոդված 28. Մարզահագուստի գույները, համարները, ազգանունները և հովանավորները

28.01. Առաջնությունների մասնակից Ակումբները խաղաշրջանի մեկնարկից նվազագույնը 10 օր առաջ հաստատում են իրենց տնային, արտագնա խաղերի, ինչպես նաև պահեստային մարզահագուստի գույները, ֆուտբոլիստներին կցված համարները (1-99) և ազգանունները՝ լատինատառ: 1-ին համարը պետք է գրանցված լինի դարպասապահի անվան դիմաց:

28.02. Մարզահագուստի տնային կամ արտագնա մարզագահուստի փոփոխության վերաբերյալ անհրաժեշտ է ոչ ուշ քան 7 օր առաջ տեղեկացնել ՀՖՖ-ին և մրցակից ակումբին: Ակումբների անհամաձայնության դեպքում վերջնական որոշումը պատկանում է ՀՖՖ-ին:

28.03. Գույների համընկնման դեպքում մարզահագուստը փոխում է հյուր թիմը:

28.04. Տեխնիկական գոտում գտնվող թիմի պաշտոնյաները պետք է կրեն այլ գույնի հագուստ, որը չի համընկնում մրցող թիմերի մարզահագուստի գույների հետ:

28.05. Մրցող թիմերի բժիշկները, մերսողները պետք է լինեն մարզահագուստով (ժիլետ կրելն արգելվում է):

28.06. Խաղացողներին արգելվում է խաղի ժամանակ կրել ցանկացած տիպի զարդեր:

28.07. Մարզահագուստի վրա թույլտրվում է տեղադրել գովազդ հետևյալ չափսերի՝

ա) մարզաշապիկի դիմացի հատվածում հովանավորի տարբերանշանը պետք է լինի առավելագույնը 200 սմ2 , որը պետք է տեղադրված լինի կրծքավանդակի կենտրոնում,

բ) մարզաշապիկի մեջքի հատվածում համարի ներքևի կամ վերևի մասում հովանավորի տարբերանշանը պետք է լինի առավելագույնը 100 սմ2,

գ) մարզաշապիկի թևի վրա հովանավորի տարբերանշանը պետք է լինի առավելագույնը 25 սմ2,

դ) վարտիքի վրա վրա հովանավորի տարբերանշանը պետք է լինի առավելագույնը 25 սմ^2:

28.08. Մարզահագուստի վրա արգելվում է տեղադրել գովազդ, որը պարունակում է քաղաքական, ռասայական կամ կրոնական տարրեր:

ԳԼՈՒԽ 10: ՄԵԴԻԱ և ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ

Հոդված 29. Խաղերի տեսագրումը

29.01. Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնությունների և Գավաթի խաղարկության մասնակից ակումբները պարտավոր են իրենց խաղերը տեսագրել. դաշտի տեր ակումբը՝ առնվազն վեց տեսախցիկով, հյուր ակումբը՝ առնվազն մեկ տեսախցիկով:

29.02. Դաշտի տեր ակումբի տեսախցիկները պետք է տեղադրված լինեն խաղադաշտի կենտրոնական գծի ուղղությամբ և յուրաքանչյուր կիսադաշտի դարպասային գծին զուգահեռ տուգանային հրապարակի գծի ուղղությամբ: Դաշտի տեր ակումբն առաջինն է ընտրում նկարահանման դիրքը:

29.03. Մրցակից ակումբների կողմից օգտագործվող լրացուցիչ տեսախցիկ/ներ/ի դիրք/եր/ի ընտրությունը չի սահմանափակվում:

29.04. Խաղը պետք է տեսագրվի ամբողջությամբ, սկսած մրցավարների և թիմերի՝ խաղադաշտ մուտք գործելուց մինչև նրանց խաղադաշտից հեռանալը, այդ թվում՝ խաղի ընթացքում տեղի ունեցող միջադեպերը: Խաղի օրվա և ժամի լուսագիրը տեսագրության ամբողջ ընթացքի վրա պարտադիր է:

29.05. Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնությունների և Գավաթի խաղարկության խաղերի տեսագրությունները պետք է ներկայացվեն ՀՖՖ-ի մամուլի ծառայություն՝ USB կրիչով, կամ ուղարկվեն էլեկտրոնային փոստով (հղման տեսքով կամ ներբեռնված որևէ վիրտուալ տիրույթում) ոչ ուշ, քան մինչև հաջորդ աշխատանքային օրը՝ ժամը 12:00: Հյուրընկալող ակումբը ներկայացնում է երեք տարբերակ, իսկ հյուրընկալվողը՝ մեկ:

Հոդված 30. Խաղերի հեռարձակումը

30.01. Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնությունների և Գավաթի խաղարկության հեռուստատեսային և առցանց հեռարձակման իրավունքը պատկանում է ՀՖՖ-ին:

Հոդված 31. Մամուլի ասուլիսների կազմակերպումը

31.01. Բարձրագույն խմբի առաջնության մասնակից ակումբները պարտավոր են յուրաքանչյուր հանդիպումից հետո ապահովել մամուլի ասուլիսների պատշաճ կազմակերպումն ու անցկացումը:

31.02. Դաշտի տեր Ակումբը պարտավոր է պատշաճ կերպով նախապատրաստել և տրամադրել մարզադաշտի՝ մամուլի ասուլիսների անցկացման համար նախատեսված սրահը՝ ապահովելով նստատեղեր մեդիայի ներկայացուցիչների համար, սեղան և աթոռներ մամուլի ասուլիսների մասնակիցների համար, բարձր հարթակ տեսախցիկների համար, պատշաճ լուսավորություն՝ տեսահեռարձակման և լուսանկարահանման համար, ձայնամեկուսացում:

31.03. Բարձրագույն խմբի առաջնության յուրաքանչյուր հանդիպումից անմիջապես հետո մասնակից թիմերը պարտավոր են ապահովել իրենց թիմերի գլխավոր մարզիչների մասնակցությունը կազմակերպված հետխաղյա մամուլի ասուլիսներին:

31.04. Եթե տվյալ Ակումբի գլխավոր մարզիչն օտարերկրացի է, ապա պետք է ապահովել թարգմանչի պատշաճ մասնակցությունը հայերեն թարգմանությամբ, բացառությամբ այն դեպքերի, եթե գլխավոր մարզիչը որակազրկված է և նրա փոխարեն պետք է ապահովել գլխավոր մարզչի պաշտոնակատարների պատշաճ մասնակցությունը: Եթե տվյալ ակումբի պաշտոնակատարը օտարերկրացի է, ապա պետք է ապահովել թարգմանչի պատշաճ մասնակցությունը հայերեն թարգմանությամբ:

Հոդված 32. ԶԼՄ-ների հավատարմագրումը և տեղակայումը մարզադաշտում

32.01. Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնությունների և Գավաթի խաղարկության մասնակից ակումբները նշված Մրցումների բոլոր հանդիպումների համար պետք է կիրառեն ԶԼՄ-ների հավատարմագրման համակարգ և կազմակերպեն վերջիններիս մուտքը մարզադաշտ միայն հավատարմագրերով:

32.02. Հանդիպումների ժամանակ ԶԼՄ ներկայացուցիչները պետք է տեղակայված լինեն մարզադաշտում իրենց համար հատուկ առանձնացված տեղերում:

32.03. Մրցումներին մասնակից ակումբները պարտավոր են ապահովել տարբերիչ գույներով ժիլետներ ֆոտոլրագրողների համար և ապահովեն խաղի ժամանակ վերջիններիս տեղակայումը միայն դարպասների հետևում:

ԳԼՈՒԽ 11: ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 33. Պայմանագրի գրանցումը

33.01. Ֆուտբոլային սուբյեկտների միջև պայմանագրերը, պայմանագրերի փոփոխումը և լուծումը, ֆուտբոլիստների՝ ակումբից ակումբ տեղափոխումը կարգավորում է ՀՖՖ «Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության» կանոնակարգով:

Հոդված 34. Վեճերի քննարկումը

34.01. Ֆուտբոլային սուբյեկտների միջև ծագած վեճերը, համաձայն ՀՖՖ-ի կանոնադրության, քննարկվում և վերջնական լուծում են ստանում ՀՖՖ-ում:

34.02. Պայմանագրային հարաբերությունների հետ կապված վեճերը քննարկվում են միայն ՀՖՖ-ում գրանցում ստացած պայմանագրերի առկայության դեպքում:

34.03. Մրցումների անցկացման հետ կապված այն իրավահարաբերությունները, որոնք չեն կարգավորվում սույն Կանոնակարգով, ենթակա են կարգավորման ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի, ՖԻՖԱ-ի այլ նորմատիվ փաստաթղթերով, ՀՀ գործող օրենսդրությամբ:

Հոդված 35. Ակումբի (թիմի) անվանափոխությունը

35.01. Ակումբի անվանափոխությունը կատարվում է ՀՀ օրենսդրության համաձայն: Ակումբը պարտավոր է մեկամսյա ժամկետում գրանցել անվանափոխությունը ՀՖՖ-ում՝ վճարելով 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

35.02. Թիմի անվանափոխությունը կատարվում է ակումբի կողմից ՀՖՖ ներկայացված գրավոր դիմումի համաձայն՝ 30,000 (երեսուն հազար) ՀՀ դրամ բանկային փոխանցում կատարելուց հետո: Թիմի անվանափոխությունը հաստատում է ՀՖՖ-ի Գործադիր կոմիտեն:

35.03. Անվանափոխության տարբերակները անհրաժեշտ է նախապես քննարկել և համաձայնեցնել ՀՖՖ-ի հետ:

Հոդված 36. Իրավահաջորդությունը

36.01. Իրավահաջորդությունը ակումբների վերակազմակերպման դեպքում կատարվում է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

36.02. Վերակազմակերպման արդյունքում առաջացած ակումբները պարտավոր են ՀՖՖ ներկայացնել իրենց իրավահաջորդությունը հաստատող փաստաթղթեր, որից հետո միայն ակումբներն իրավունք կստանան մասնակցելու ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող պրոֆեսիոնալ Մրցումներին:

Հոդված 37. Թիմերի մասնակցությունը Եվրագավաթներին

37.01. Հայաստանի 2018-2019թթ. խաղաշրջանի Չեմպիոն թիմն իրավունք է ստանում մասնակցելու ՈՒԵՖԱ-ի 2019/2020թթ. Չեմպիոնների Լիգայի (ՉԼ) խաղարկությանը:

37.02. Հայաստանի Գավաթակիրը իրավունք է ստանում մասնակցելու ՈՒԵՖԱ-ի 2019-2020թթ. Եվրոպայի Լիգայի խաղարկությանը:

37.03. Բարձրագույն խմբի Առաջնության արծաթե և բրոնզե մեդալակիրները իրավունք են ստանում մասնակցելու ՈՒԵՖԱ-ի 2019/2020թթ. Եվրոպայի Լիգայի խաղարկությանը:

37.04. Մեկ թիմի կողմից եվրագավաթներին մասնակցելու երկու իրավունք վաստակելու դեպքում՝

ա) եթե Հայաստանի Գավաթը նվաճել է Բարձրագույն խմբի առաջնությունում 1-ին, 2-րդ կամ 3-րդ տեղը զբաղեցրած թիմերից մեկը, ապա ՈՒԵՖԱ-ի 2019/2020թթ. Եվրոպայի Լիգայի խաղարկությունում մասնակցության իրավունքը փոխանցվում է Բարձրագույն խմբի առաջնությունում 4-րդ տեղը գրաված թիմին:

բ) ՈՒԵՖԱ-ի 2019-2020թթ. Եվրոպայի Լիգայի խաղարկության մասնակից ՀՖՖ-ի երեք թիմերից որևէ մեկի մասնակցությունից հրաժարվելու դեպքում այդ իրավունքը փոխանցվում է Բարձրագույն խմբի առաջնությունում հաջորդ տեղը գրաված թիմին:

Հոդված 38. Այլ հարցեր

38.01. Ֆուտբոլիստների կարգավիճակը և տեղափոխությունները կարգավորվում են ՀՖՖ-ի «Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխման» կանոնակարգով:

38.02. Սույն Կանոնակարգի դրույթ/ներ/ի խախտումը (չկատարումը) առաջացնում է պատժամիջոցներ և/կամ տուգանքներ՝ համաձայն ՀՖՖ-ի «Կարգապահական կանոնակարգի»:

38.03. Մրցավարությունն ու տեսչությունը կոպիտ սխալներով անցկացնելու դեպքում սպասարկող անձնակազմի սխալ/ներ/ թույլ տված անդամների նկատմամբ կիրառվում են կարգապահական պատժամիջոցներ՝ համաձայն ՀՖՖ-ի՝ մրցավարությունն ու տեսչությունը կանոնակարգող նորմատիվ փաստաթղթերի:

38.04. Սույն Կանոնակարգը հաստատվել է ՀՖՖ Գործադիր կոմիտե կողմից 01.07.2019թ.-ին: Այն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ 2019-2020 ՄՐՑԱՇՐՋԱՆԻ ԳԱՎԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Հայաստանի ֆուտբոլի 2019-2020 մրցաշրջանի Գավաթի խաղարկությունն անցկացվում է օլիմպիական մրցակարգով:
2. Գավաթի խաղարկությանը մասնակցում են Բարձրագույն խմբի առաջնության մասնակից բոլոր թիմերը և Առաջին խմբի առաջնության այն թիմերը, որոնց մայր ակումբները ներկայացված չեն Բարձրագույն խմբում:
3. Գավաթի խաղարկության հանդիպումներն անցկացվում են 2019 թվականի սեպտեմբերից մինչև 2020 թվականի մայիս ամիսն ընկած ժամանակահատվածում:
4. Գավաթի խաղարկության հանդիպումներին մասնակցած ֆուտբոլիստներին, այլ ակումբ տեղափոխվելու դեպքում, թույլատրվում է նոր թիմի կազմում մասնակցել 2019-2020 մրցաշրջանի Գավաթի խաղարկության հաջորդող հանդիպումներին:
5. Գավաթի խաղարկության հանդիպումները, բացառությամբ կիսաեզրափակիչ հանդիպման, անցկացվում են մեկ խաղով: Այն դեպքում, երբ զույգ կազմող թիմերից երկուսն էլ ներկայացնում են միևնույն առաջնությունը (Բարձրագույն խումբ կամ Առաջին խումբ), դաշտի տեր թիմը որոշվում է վիճակահանությամբ: Այն դեպքում, երբ զույգ կազմող թիմերից մեկը ներկայացնում է Բարձրագույն խմբի առաջնությունը, իսկ մյուսը՝ Առաջին խումբը, դաշտի տեր է համարվում Առաջին խումբը ներկայացնող թիմը: Կիսաեզրափակիչ հանդիպումը անցկացվում է երկու խաղով՝ մեկական անգամ սեփական և մրցակցի խաղադաշտում: Երկու խաղերի արդյունքում հավասար հաշվի պարագայում մրցակցի խաղադաշտում խփված գնդակը ունի առավելություն:
6. Խաղերի արդյունքների հավասարության դեպքում խաղի ավարտին նշանակվում է լրացուցիչ 30 րոպե խաղաժամանակ՝ 2 խաղակես (15+15 րոպե տևողությամբ, առանց ընդմիջման): Լրացուցիչ խաղաժամանակում հավասար արդյունքի դեպքում նշանակվում է 11 մետրանոց հարվածաշար՝ ֆուտբոլ «Խաղի կանոնների» համաձայն: Լրացուցիչ խաղաժամանակի նշանակման պարագայում խաղի մասնակից թիմերը հնարավորություն ունեն կատարելու ևս մեկ լրացուցիչ փոխարինում:
7. Գավաթի խաղարկության մասնակից թիմերի դիրքերը խաղացանկում որոշվում է վիճակահանությամբ:
8. Վիճակահանությանը մասնակցում է յուրաքանչյուր ակումբից մեկական ներկայացուցիչ: Որևէ ակումբի ներկայացուցչի բացակայության պարագայում վիճակահանությունն անցկացվում է առանց այդ ներկայացուցչի:

ՀՖՖ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ (2019-2020 ՄՐՑԱՇՐՋԱՆ) ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

Խորեն Զարգարյան	ՀՖՖ Մրցումների կազմակերպման և անցկացման բաժնի պետ

ՀՖՖ Պրոֆեսիոնալ մրցումների անցկացման (2019-2020 մրցաշրջան) կանոնակարգի ստեղծմանը նպաստել են

Արթուր Ազարյան	ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի ղեկավար, ՀՖՖ Գլխավոր քարտուղարի տեղակալ
Ամալյա Գրիգորյան	ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի ղեկավարի տեղակալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ

ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԲԱԺԻՆ

ԽԱՆՋՅԱՆ ՓՈՂՈՑ 27

ԵՐԵՎԱՆ, 0010, ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԵՌ. +374 11 88 88 08

ՖԱՔՍ +374 10 54 71 73

ԷԼ. ՓՈՍՏ. COMPETITON@FFA.AM

WWW.FFA.AM